

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵԾ ՎՏԱՆԳԸ

Զուգադիպութեամբ մը, զոր զիպուածին չենք կրնար վերադրել, վասն զի քաղաքական կացութեան մը բնական հետևանքն է, վերջին ամիսներս Հայաստանի մէջ կրօնափոխութեան շարժումը սկսաւ երկու տարբեր ուղղութեամբ: Մաս մը հայ գեղացիներ յունագաւանութեան յարում ցոյց տուին. ուրիշներ ալ իսլամութեան դիմեցին: Ազգային եկեղեցիէն հեռացման երկու ճամբաները թէև անհուն անջրպետով մը իրարմէ բաժնուած են, բայց երկուքն ալ միևնոյն նպատակակէտին հասնելու համար բացուած կը համարուին: Նիւթական կեանքի ապահովութիւնը նիւթական ուժի մը հովանաւորութեանը ներքեւ փնտռելու կը հակամիտի հայը:

Հաւատուրաց Հայերը առ այժմ սակաւաթիւ են: Միւլիոնով համարուող ժողովրդի մը մէջէն քանի մը հարիւր հոգիի կորուստը տարապայման վրդովիչ նշանակութիւն պէտք չէր ունենար, մանաւանդ մեծ կատարածներէն յետոյ: Եւ սակայն կրօնափոխութեան այդ զուժերը ահա զապէս կը տաքնապեն մեր մտքերը, վասն զի մեծ վրտանդի մը մերձեցումը կը զգանք բնազդով: Ազգութիւն մը ջնջող համաճարակ ժանտամահի մը առաջին նշանները տեսնելու վախը ունինք: Սուրբ Նարեկուն սահման մը կրնայ զրուկը. կրօնափոխութեան կոտորածին առջևը կտրելու համար ո՛ր եւ է զօրութիւն կը տկարանայ եթէ ժողովուրդ մը ինքն է որ բարոյական մահուան ընդառաջ կը վազէ, խելակորոյտ, մոլեգնած, նման ծովը սուրացող զիւհար երամակին:

Մեր վրդովումը մտքերնուս պաղարին հանդարտութիւնը կորսնցնել չի տար: Թրքահայաստակ Հայոց պապային ուժերը թէ՛ Հայաստան, թէ՛ Պոլիս, թէ՛ արտասահման կաշխատին քաղաքական ձեռնարկներու, նպատակայարմար դիմումներու միջոցաւ Հայաստանի վիճակը բարեփոխել: Յուսալով որ պարագաներու օգնութեամբ կարենանք մինչեւ աստիճան մը մեր փափազին հասնիլ, կրօնափոխութեան տաքնապին առթիւ առ այժմ չենք ուզեր քաղաքական ուղղութեան խնդրով զբաղիլ: Գիշ մըն

ալ խօսինք թէ մեզի՞ ինչ կը մնայ ընել այն սահմանին մէջ ուր գործելու ազատութիւնն լիովին կարող ենք վայելիլ: Մենք սովորութիւն ըրինք մանաւանդ այս վերջին տարիներս, շատ հոգ չի տանիլ այն բոլոր մանր կամ խոշոր բարեքններուն զոր մեր ձեռքով կրնանք ընել մենք մեզի համար: Այս էջերուն մէջ հրատարակուելու վրայ եղող Տեղեկագրին երկրորդ մասը, որ Հայաստանի համար 1871ին պատրաստուած բարեկարգութեանց ծրագիր մը կը պարունակէ, մեզի հրահանգիչ դասեր կու տայ ինքնօգնութեան պէտքին վրայ: Կը տեսնենք թէ Հայաստանի հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովը երբ կարգ մը քաղաքական ու վարչական պահանջներ կ'ընէ, զորս գործադրելու ձեռնհասութիւնը Դուրը ունի միայն, միւս կողմէն կը յայտարարէ թէ Հայաստանի բարեկարգութիւնը զիրացնելու համար հայ ժողովուրդը ինքն ալ իր կողմէն ընելիք գործեր ունի որոնք պէտք չէ երեսի վրայ մնան: Ու արդարեւ մեր անհոգութիւնը, մեր ծուլութիւնը, մեր թեթեւամտութիւնը շատ շարեքնութեւ պատճառ եղած են:

Կրօնափոխութեան արդի տաքնապը պէտք է որ մեզի խելաբերէ և սկսինք մտածել թէ այն հակակրօնական ձգբումները եւ «ճշմարտասիրական» քարգութիւններն ու ձեռնարկները որոնք կը նկրտին Հայաստանի Հայոց տասնը հինգ դարու հաւատքը խախտել, եւ հայ ժողովուրդը իր կրօնքէն պաղեցնելով հեռացնել իր ազգային եկեղեցիէն, արդեօք այդ ձեռնարկներն ու քարգութիւնները չեն ծաւայեր ամէն առապար հարձելու, ամէն խոչ եւ խուժ ջնջելու իսլամութեան կամ օրթոտոքսութեան սրշաւանքին առջև:

Ու արդարեւ եթէ ուզենք քննող մտքով հեռատեսիլ հայ եկեղեցիին ղէմ մղուած կողմին հաւանական հետեւանքները պիտի համազօրենք թէ, հակաքրիստոնէական ոգի մը ստեղծելու տքնողը, ու լուսաւորչականէն տարբեր դաւանանքի մը տարածման աշխատողը, երկուքն ալ համերաշխութեամբ անշիտ սկսաբար կը նպաստաւորեն իսլամութեան եւ օրթոտոքսութեան ձգտումները:

Հայ ժողովրդին ամենաստուար զանգուածակոյտը հայութիւնը չըմբռնե՞ր այն պայմաններուն մէջ որոնցմէ շըրջապատուած է ազգութեան գաղափարը փոքրամասնութեան մը համար: Հայութիւնը Հայաստանի մէջ կրօնական զգացումի վրայ հիմնուած է, եւ ոչ թէ իմաստասիրական մտքի վրայ: Հայը իր հաւատքովն է որ հայ կը մնայ: Մեր ժողովրդին մտաւորական վիճակը հիմնական փոփոխութիւն չէ կրած. կը մնայ այսօր նոյնը ինչ որ էր դարերէ ի վեր: Այն ուժը որ դարերէ ի վեր զինքը բռնած է եւ կը պահպանէ, երբ տկարանայ, թուլնայ, այդ ժողովուրդը այլ եւս ո՛ր է յենարան շունենար կանգուն մնալու համար: Իր մարդակներէն զրկուած է:

Հայաստանի հայուն համար Հայութիւնը իր ժամն է, իր տէրտէրն է, իր վանքն է, իր պահքն ու ծոմն է, իր սուրբն է: Այն օրը որ Հայաստանի հայ ժողովուրդը իր ժամը Աստուծոյ բնակարանը չհամարիր, ու իր տէրտէրն ալ Աստուծոյ պատկերը չնկատեր, ա՛լ չհաւատար թէ ծոմն ու պահքը ապագայ երանաւէտ կեանքի մը երաշխաւորութիւնը կ'ընծայեն իրեն, և կը սկսի կարծել թէ իր սուրբիւրը անզօր են իր փափագին գոհացում տալու, իր ցաւերէն զինքը ազատելու, ա՛լ ինչու ուրեմն հայ գեղացին յանուն ստութեան մը ամէն տառապանք եւ նեղութիւն կրէ այս աշխարհիս վրայ: Ուրիշ կրօնքներն ալ կրնան այնքան խարեպատիր ըլլալ որքան իր հայրերէն իրեն աւանդուած լուսաւորչական հաւատքը, բայց գոնէ այդ այդ ստութիւնները իրեն քիչ մը կը հայթայթեն կեանքի նիւթական հանգստութիւնը որ մարդուս միակ կէտ նըպատակին կ'ըլլայ, որուն կը ձգտին իր բոլոր ուժերը երբ մարդս ո՛չ մտաւորահաճոյքով կ'արբշոի, ո՛չ հոգեկան հըրճուանքով կը զմայլի, եւ ո՛չ ալ ո՛ր է իտէական մը իրեն զօրավիզ ունի կեանքի ձանձրոյթին մէջ: Անհաւատութեան արխտով վարակեալ հայ պարզ հոգիները այլ եւս ուժասպառ են երբ գաղափարային կեանքի մը համար գերագոյն մարտնչումներու ճգնաժամը կը հասնի: Ընդդիմամարտութեան կորովը կը պակսի իրենց, վասն զի ա՛լ չեն հաւատար: «Առ Բնչ օգուտ» ջլատիչ, մահաթոյն տարակուսական հարցումը իրենց առջեւ կը կանգնի: Ու այն դիրութեամբը որով հաւատացեալ հայը պիտի մարտիրոսանար, միևնոյն դիրութեամբը կուրանայ իր հաւատքը, զօր չունի, եւ կ'անջատի այն ցեղէն որ ի փոխարէն այս աշխարհիս մէջ իր կրած տառապանքներուն եւ ոչ իսկ կրօնքի մը երազանքներովը զինքը կը հմայէ:

Չենք ըսեր թէ կրօնափոխութեան սակաւաթիւ դէպքերը Հայաստանի մէջ անհաւատութեան տարածումը կը հաստատեն, այլ՝ վրդովիչ նշաններ կը համարինք, մանաւանդ երբ օրինակին վարակման զօրութիւնը քաջածանօթ ճշմարտութիւն մըն է: Ամէն անոնք որ կ'աշխատին հայուն կրօնական հաւատքը խախտել անոնք ամէնքն ալ ուղղակի էն ծանր ու մահաբեր հարուածը կ'իջեցնեն հայ ազգայնութեան գլխուն:

Մենք 1895ի աղէտներէն յետոյ ուժգնապէս ցընցուեցանք. զգացինք թն հին դարերը դեռ չեն անհետա-

ցած. իսլամը տակաւին Թաթիհներու եւ Պայազիտներու ժամանակին պէս կարող է աներկիւղ կոտորել քրիստոնեայ ցեղ մը, եւ զայն իսլամացման մղել, վասն զի իսլամը Եւրոպան իրեն մեղսակից ունի, կա՛մ եւրոպական շահերը: Գիտէինք թէ իր յաջողութիւնը առժամայ էր, բայց կարելի չէր այդ «առժամայ»ին վերջացման ճշգրիտ թուականը որոշել: Թերեւ ջանի մը ամսէն ընկճուէր թիրքը, գուցէ բազմաթիւ տարիներու շարքէ մը յետոյ: Ու մենք այս անորոշութեան ժամանակամիջոցին մէջ մեր ցեղային ինքնապահպանման էն զօրեղ ուժերէն մին հայ կրօնքին մէջ փնտռելու էինք, ինչպէս մեր հայրերը փնտռած էին անցեալ դարերուն: Չարդերը մեզի չեն ոչնչացներ. ազգային կրօնքին ուրացումն է որ հայութիւնը կրնայ անհետացնել: Պատմութիւնը կը վկայէ այս ճըշմարտութեան: Կոտորածները անհատուած դարերէ ի վեր կը շարունակուին. բայն այն անկիւնը ուր հայ մարդ մը եւ հայ կին մը կը ճողոպրին, հոն հայութեան վերընձիւղման սերմը միշտ անմեռ է: Ամայացած, չորցած գեղին մէջ զօր թշնամին արիւնով ոռոգելէ յետոյ թողեր գացեր է, ահա օր մըն ալ թուփեր կը սկսին գլուխ տալ, եւ կամաց կամաց աճելով, բազմանալով, իրարու քով զալով հայ պուրակները կը կազմեն, նորէն Հայութեան անտառը կը ստեղծեն: Բայց հոն ուր հայը իսլամացած է, հոն Հայութեան սերմը այլ ևս ոչընչացած է: Իսլամացեալ գեղերը երբեք հայութիւն չէ վերածնած:

Հայ կինը երբ իր դրացին սրգոզի, իր բարեկամութեան ջնջումը հաստատող ահեղագոյն երգումը կ'ընէ ըսելով «Թէ որ մէյ մըն ալ տունդ ոտք կոխեմ, ճամին մտա՞ ըլլամ»: Այս է ժողովրդին հաւատքը. ժամը՝ հայն է, ճամին՝ թիրքն է: Այն օրը որ հայը ժամն ու ճամին երկուքն ալ պարզապէս նիւթեղէն շէնքեր համ ըի, այն օրը հայութեան հոգին թունաւորուած է այլ եւս: Այդ թոյնը չմատուցուեց իրեն:



Վերջին տարիներու ազիտաբեր պատահարներէն ի վեր Եւրոպացի քրիստոնեայ կրօնաւորները հաւատքի տարածման համար իրենց աշխատութիւնները կրկնապատկեցին մեր երկիրը, ո՛ր եւ է ժամանակէ աւելի յաջող արդիւնաւորութեամբ: Իրենց զօրծունէութիւնը յատկապէս տարածեցին Բարձր-Հայք. քրիստոնեայ հայ ժողովուրդը աւելի քան տըլուր այդ նահանգներուն մէջ զժբարդ ըլլալով: Իսլամին սուրին զոհուած, արիւնի ու արցունքի մէջ լողացող հայուն Եւրոպայէն հաց ու ըսփոփանք բերող այդ կրօնաւորներուն համար անտրտում երախտագիտութեան զգացումներ պիտի տածէինք, եթէ անոնք իրենց անձնուիրութեանն ու զոհողութեանը փոխարինութիւնը փնտռէին ալն խոստումին մէջ միայն զօր-Քրիստոս տուաւ փոքրիկներուն բաժակ մը ցուրտ ջուր հրամցնողին: Բայց դրականութեան դարու մը մէջ ա-

նոնք իսկ, որ իտեականի խորհրդանշանը երկցող Քրիստոսի բարոյական դիմագծերուն ներքև կը ներկայանան աշխարհի, անոնք իսկ աւելի խոհեմութիւն կը համարին այս անցաւոր աշխարհիս մէջ փոխադրութիւն մը ստանալ իրենց մարդասիրական գործերուն քան թէ անանց աշխարհի մը մէջ առաքինութիւններու կրկնատուածարին հաշուեյարդարութեանը սպասել:

Ինչ կրնանք առարկել անոնց որ իրենց եւրոպական հանգստաւէտ կեանքէն հրաժարելով կուզան մինչեւ մեր աւեր աւերակ աշխարհը, եւ օտարացեղ ժողովրդի մը կուտան հացը որուն կարօտովը տառապողներ շատ կան նոյն իսկ իրենց բնիկ հողին վրայ, նոյն իսկ իրենց արեւնակիցներուն մէջ: Վատիկան բարեգործական հաստատութիւն մը չէ. իշխանութեան մը կեդրոնն է: Հոգեւորական կառավարութիւն մըն ալ յարկնման աշխարհական պետութեանց իր սեփական շահերն ունի որոնց նըպաստաւորմանը կ'ստրկացնէ զգացում ու գաղափար: Կաթոլիկ եկեղեցին գերագոյն կէտ նպատակի մը առաջադրած է, զկպի ուր կ'ընթանայ անընդհատ յարատեւութեամբ: Իր ծրագիրն է՝ տիեզերքի բոլոր հողիներուն համախմբումը միութեան կեդրոնի մը շուրջը, որ է Հրոսոմի աթոռը. ճշմարտապէս միակ Աստուածային հաստատութիւնը, ըստ իր համոզման: Ինչ որ այդ ծրագրին յաջողութեանը կը ծառայէ կը համարուի կաթոլիկութեան շահը, զոր Վատիկան պարտաւոր է պաշտպանել: Հոն ուր անհատական կամ հաւաքական շահ մը պաշտպանուի ուրիշի մը շահուն զոհողութեամբը, հոն խղճմտանքը կը սպաննուի: Այս իրականութիւնը ըմբռնած ենք, ուստի ո՛չ կը զարմանանք, ո՛չ կը բարկանանք երբ Վատիկան նման Ռուսիոյ, Գերմանիոյ, Ֆրանսայի ինքն ալ Հայաստանի արեւինն մէջ իր շահերը կը փնտռէ: Բայց միանգամայն մեր իրաւունքն ալ է հաւաստել թէ այդ կրօնական շահանքորութիւնը Հայաստանի հայ ժողովուրդին բարոյականը խանգարելու կը ծառայէ, և լուսաւորչական հայը օրթոտոքսացման ու իսլամացման կը նախապատրաստէ:

Լատին կրօնաւորը գործնական միջոցներով հայուն կը սորվեցնէ եւ ընդունել կուտայ այն վարդապետութիւնը թէ՛ անհատ մը իր նիւթական շահուն համար իր հաւատքը պէտք է ուրանայ: Այս բանաձեւին մէջ կ'ամփոփուի Հայաստանի մէջ «հաւատոյ տարածման» սկզբունքը: Եւ արդարեւ, ինչո՞ւ համար քանի մը տարիէ ի վեր լուսաւորչական հայեր կուզեն, կամ ուզեցին, կաթոլիկանալ: Անշուշտ այն համոզումով չէր թէ կաթոլիկ եկեղեցին հաղորդութեան գինիին մէջ ջուր խառնելով ճշմարիտ քրիստոնէութիւն կը ներկայացնէ, կամ թէ հակաքրիստոնէական մեղանշում է ըստ լուսաւորչականներուն «Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ» գաւանիլ, այլ պէտք է «Անարատ Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ» ընդունել: Լատին կրօնաւորը հայ կեիփոխման

չէ որ դիմում կ'ընէ. պիտէ թէ այդ միտքը աստուածաբանական նրբաբանութեանց ընդունարան ըլլալու նախապատրաստութիւններով բարակցած չէ տակաւին: Հաւատափոխութեան հրաւերը կ'ուղղուի ստամոքսին միայն: Երբ պարզամիտ ժողովուրդը իր կրօնքին զոհողութեամբը հանդստանալու գաղափարին ընտելանալ կը սկսի, իր միտքը կը վարժի նոր ուղղութեան մը հակիլ: Այսօր կը սորվի լուսաւորչականութիւնը թողուլ կաթոլիկ ըլլալ, վաղն ալ միեւնոյն պատճառաւ օրթոտոքսութեան կը յարի: Ու անգամ մը որ այլ ևս այդ ճամբուն մէջ կը մտնէ կարող է մինչեւ իսլամութեան հասնիլ: Օրինակը մեծ ազդեցութիւն ունի գեղերուն մէջ:

Համացեղ, համարին բայց կրօնական տարբեր տարբեր գաւանանքներու պատկանող Հայոց միջև սիրոյ եւ եղբայրակցութեան գաղափարին միշտ ուժ տուած ենք: Լուսաւորչական, կաթոլիկ, Աւետարանական ամէն հայ միեւնոյն ազգայնութեան իրաւունքով հայ է. բայց ամէն հայ, ինչ գաւանանքի ալ որ պատկանի, պէտք է ըմբռնէ թէ հայ գեղացի ժողովրդին մէջ այժմ կրօնական զգացումին տկարացումը, կամ կրօնափոխութեան տրամադրութիւնը կրնան մահաբեր ըլլալ Հայութեան: Թուի թէ միսիոնարները շատ հեռատեսութեամբ դիտած են թէ քրիստոնէական գաղափարը ոչ թէ կը զօրանայ այլ կը թուլնայ եթէ հայ ժողովուրդը իր եկեղեցին սկսի շտիբել. ուստի ջանադիր չեն գտնուիր ժամուն տեղ ժողովարան հաստատել: Փափագելի էր որ այն կաթոլիկ հայերը որոնց ձայնը կրնայ Վատիկան հասնիլ, ջանան ձեռնհաս իշխանութեան պարզել Լուսաւորչական Հայոց մէջ «հաւատոյ տարածման» համար եղած ջանքերէն ծագած ազդեանքը, որոնք իսլամութեան շահերուն կրնան ծառայել:

Անշահախնդիր մարդասիրութիւնն ալ իր օգուտները ունի: Ժողովրդի մը սէրն ու երախտագիտութիւնը պարտաւոր ենք բան մը չեն կորսնցնիր: Արդեօք Ֆրանսացի կաթոլիկ եկեղեցականները Հայոց սրտերը պիտի չգրաւէին, եթէ զժբաղդ գեղացիներու տրուած պատառ մը հացին իբր գին անոր կրօնքը պահանջած չըլլային:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷԶԵՐ

ԾԱԳՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՒՆ

Գ.

Նախորդ յօդուածին մէջ ամփոփեցի Հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովին տեղեկագիրը, որ պաշտօնական անհրաժեշտ պայցոյցներով կը պարզէր Հայաստանի ահեղ վիճակը: Յանձնաժողովը իր տշխատութիւնը երկու մասի բաժնած էր. առաջինը կը վերաբերէր Հայաստանի օրուան կացութեան, երկրորդը՝ ապագային: Հիմակ այդ երկրորդ մասն է որ պիտի պարզուի:

Տեղեկագրին երկրորդ մասին իբր յառաջաբան, Յանձնաժողովը նախ եւ առ սլ կը յայտարարէ թէ քսան տարուան թաքրիւններէն ակնհայտ կը տեսնուի թէ Պատրիարքարանը Ասիական Թիւրքիոյ գաւառները եւ մասնաւորապէս Հայաստան գործուած Հարստահարութեանց դժբաղդեղու համար, միշտ միայն եւ միմիայն Դրան դիմած է. կառավարութիւնն ալ ուրիշ բան չէ ըրած բայց եւ թէ նահանգային իշխանութեանց պարզապէս հրահանգներ զրկել: Եւ սակայն Առաջնորդարաններէն Գիւնիչ Յանձնաժողովին հասած 54 տեղեկագիրները, Պատրիարքարանին Դիւանը եւ քսան տարուան մէջ Դուռը տեղացած թաքրիւնները ցոյց կուտան թէ կառավարական հրամանները ո՛ր եւ արդիւնք չեն ունեցած, ու զեղծումները, Հարստահարութիւնները կը շարունակուին միևնոյն յարատեւութեամբ: Հետևաբար Պատրիարքարանը կը պարտաւորուի իրաց վիճակը փոխելու համար սովորական թաքրիւններէն տարբեր միջոցի դիմել. ու կառավարութիւնն ալ պէտք է որ պարզ հրամաններու ընթացիկ ճամբէն շեղի: Ահա այսնպատակաւ է որ Ազգային Ժողովը ընտրեց այս Յանձնաժողովը որուն պաշտօնն է հայաբնակ նահանգներու ընդհանուր վիճակը քննել եւ ցոյց տալ կացութեան պահանջած միջոցները: «Տեարք, Ձեր Յանձնաժողովը, կ'ըսէ տեղեկագիրը, իր խուզարկութիւններովը հասկցաւ թէ որքան իրաւունք ունէինք այսպիսի քննութիւն մը հրամայել եւ խորհիլ այն միջոցներուն վրայ որոնք կրնան վերջ մը գնել անորակի թարբարութեանց որոնց թատեր սքե՞ն են Հայաստանի նահանգները:»

Ահա Յեղափոխութեան պայծուժը:

Ինչ սարսաղագիտի շունչ է որ կը սուրայ այդ էջերուն մէջ: Ազգին համբերութեան սահմանը ալ ո՛ր հասած պէտք է ըլլայ որ Հայոց Պատրիարք մը, իր հետն ունենալով ազգին եկեղեցականութիւնը եւ աշխարհական ներկա-

յացուցիչները, ամէնքը միասին օսմանեան կայսրութեան մայրաքաղաքին մէջ, Երուսալի առջեւ, եւ ի ներկայութեան Դրան հայ պաշտօնատարներուն համարձակին օսմանեան վարչութիւնը յանուն հայ ազգին բարբարոսական հոշակել, ու թիւրք իշխանութիւնը հրաւիրել իր ընթացքը փոխելու:

Այն կողմին մէջ զոր տասը տարի է Հայաստանէն, Պոլսէն, Երուսալան ու Ամերիկայէն կը մղենք թրքական վարչութեան դէմ, մեր նախորդներուն առաջնորդութիւնը կը տեսնենք: Երախտագիտութեամբ յիշենք անոնք որ արի ու վսեմ եղան այնպիսի ժամանակ մը ուր օսմանեան իշխանութիւնը զօրեղ կ'երևար: Ու երբեք չմոռնանք պարզուի վանեցին, Մեծ-Հայրենասէրը որ ցնցեց ու խռովեց հայութիւնը, իրականութիւնը ամենուն աչքերուն առջեւ գնելով:

* * *

Յանձնաժողովը որ Հայաստանի աղէտները չորս դասի բաժնած էր, անոնցմէ իւրաքանչիւրը առանձինն առանձինն նկատողութեան առնելով ըստ այնմ ալ մատնանիչ կ'ընէ շարիքներուն դարմանը: Նոյն եւ առաջ տուրքերու խնդիրն է որ ստիպող սկանութիւն ունի: Եւ երբ կը տեսնենք մինչեւ այսօր ալ այդ դրամական ճնշումն է որ հայերը մինչեւ իսկ հաւատափոխութեան կը մղէ, կ'ըմբռնենք այդ խնդրին կենսական կարևորութիւնը: Աղէտը դարմանելու համար Յանձնաժողովը կը ներկայացնէ առաջարկ մը որ իսլամական վարչութիւնը հիմէն խախտելու կը նկրտի. բայան տիրապետող ցեղին հաւասարելու բարձրացնել կուզէ. կառավարութեան կ'առաջարկէ որ հայ ժողովուրդը փոխանակ զինուորական տուրք վճարելու ինքն ալ զօրք տայ: «Մեր իսլամ հայրենակիցներուն պէս մենք ալ կուզենք մեր արիւնը հեղուլ Հայրենիքին եւ Պետութեան համար. վասն զի մենք ալ Պատույ զգացումն ունինք եւ քաղաքացիին պարտականութիւնները գնահատել զիտենք:»

Դիւրին է ըմբռնել այսպիսի առաջարկութեան մը քաղաքական հետևանքները: Հայը երկրին իշխանութեան իրապէս մասնակցելու համար պէտք է որ ծանր պարտականութեանց մէջ ալ իր բաժինը ունենայ: Երբ հայ ազգը իր ներկայացուցիչ մարմինն բերնովը զինուորագրութեան մասնակցելու պահանջուժը կ'ընէ, ո՛չ ոք Երուսալի կամ Թիւրքիոյ մէջ իրաւունք կ'ունենայ հայ ազգի ներսին տալ թէ մենք իսլամին հաւասար իրաւունքնել վայելել կուզենք միայն, արիւնի պարտականութենէն խոյս տալու պայմանաւ:

Բայց Յանձնաժողովը կը զգայ թէ այսպիսի առաջարկ մը անմիջապէս ընդունուելու եւ գործադրուելու սահմանուած չէ: Թուի թէ սկզբունք մը միայն հոշակել կուզէ, եւ անմիջապէս կ'անցնի գործնական միջոցներու որոնք օրուան շարիքը կրնան շուտով դարմանել:

Կառավարութիւնը զինուորական տուրքը մասամբ

թիւնցում է, ջնջելով տղաքներու եւ ծերերու վր-
ճարուժը: Սակայն այս որոշումը կ'ուզուի գործադրել
տրուած թուականէն. մինչդեռ պէտք էր գործադրել ցու-
ցակազրութեանց պատրաստութեան թուականէն: Այս
պատճառաւ կառավարութիւնը կը պահանջէ տարիներէ
ի վեր տղաքներու եւ ծերերու հաշուէն գոյացած պարտ-
քը: Յանձնաժողովը կ'առաջարկէ այս յետամնաց տուր-
քին անմիջական ջնջումը:

Նմանապէս կ'առաջարկէ եկուաքի եւ քեւերքի տուր-
քերէ մնացորդ պարտքերու ջնջումը, որովհետեւ արժե-
քաւորութեանը շատ զեղծարարութեամբ կատարուած են:
Կը պահանջէ որ կալուածներու բուն արժէքը եւ շահերու
բանակը արդարապէս որոշուին, նախօրոք արժեքաւո-
րութեանը ջնջելով:

Յետոյ իր ուշադրութիւնը կը դարձնէ տասանորդի
տուրքին գանձման եղանակին վրայ: Իրիկամի դրու-
թիւնը երկրագործութեան համար մահաբեր կը նկատէ,
եւ նմանապէս փաստակար կառավարական գանձարանին,
վասն զի միշտիցիւնը որ անգթօւն կը կեղեքէ երկրա-
գործ ժողովուրդը, հազիւ թէ հաւաքած գումարին կէսը
կառավարութեան կը հասցնէ: Ուստի Յանձնաժողովը
Միւլթիզիմի դրութեան ջնջումը կ'առաջարկէ, ու կուզի
որ կառավարութիւնը ուղղակի ինքը կատարէ տուրքերու
գանձումը:

Հանրագումար կոչուած սնտուկները զեղացիին շահուն
հակառակ կը համարի, ուստի անոնց տարբեր դրու-
թեամբ վերականգնութիւնը կուզէ: Չ'ըմպպէս կը յանձ-
նարարէ կալուածական վարկի դրամատուններու հիմար-
կութիւնը որմէն մեծապէս պիտի օգտուի երկրագործ
ժողովուրդը:

Տուրքերու վճարումի դրութեան համար այս բարե-
փոխութիւնները բաւական համարելով Յանձնաժողովը
կ'անցնի հանրային պաշտօնեաններու զեղծարարութեանց
խնդրին: Այդ պաշտօնեանները մեծ մասամբ տղէտ մար-
դեր են, ոչ օրէնք զիտեն, ոչ վարչական գիտութիւն ու-
նին, ուստի եւ երկրին օրէնքներուն հակառակ կը գոր-
ծեն: Վարչական զեղծութեանը վերջ մը գնելու ձեռնհա-
սութիւնը կառավարութեան կը պատկանի. բայց ինչ որ
ալ ըլլան կառավարական որոշումները, որքան որ ալ խը-
նամբ տարուի պաշտօնեաններու ընտրութեան մէջ, բայց
եւ այնպէս պէտք է ստեղծել անգագրում հսկողութեան
դրութիւնը: Առանց ասոր երբեք ո' եւ է երաշխաւորու-
թիւն չի կայ անոնց զեղծարարութեանց դէմ. պիտի շա-
րունակեն օգուտ քաղել ժողովրդին տղիտութենէն եւ
չորպաձիներու մեղսակցութեամբ պիտի ճնշեն, հարբո-
տահարեն, կեղեքեն ժողովուրդը: Ե՛թէ կառավարութի-
ւնը նահանգները յատուկ քովերներ դրիկէ, որոնք վա-
րիներէն բոլորովին անկախ ըլլան, ո' եւ է ազգեցութեան
ներքէ չգտնուին, ու լիազօր իշխանութիւն ունենան ա-
մէն կարգի մարդոց հետ յարաբերութիւն հաստատել եւ
կուսակալութեան վիճակը մօտէն քննել, ըստ Յանձնաժո-
ղովին տարակոյս չի կայ թէ պաշտօնեաններուն ընթացքը

հիմնովին պիտի փոխուի:

Յատուկ քովերներու առաքումէն ո' եւ է օգուտ ըս-
պասելու համար պէտք է որ կառավարութիւնը հարկ ե-
ղած միջոցները անօրինէ որպէս զի կուսակալները առա-
ջուց ժողովրդին վրայ ճնշում չի բանեցնեն, եւ ժող-
վուրդը վախնալուն չպարտաւորուի ճշմարտութիւնը
ծածկել:

Կառավարութիւնը պէտք է որ յանցաւոր ճանչցուած
պաշտօնեանները պատժէ, ապա թէ ոչ ժողովուրդներուն,
մանաւանդ քրիստոնեաններուն վիճակը առաջուրնէն աւելի
կը վատթարանայ:

Վնասակար հետեւանքներ կունենան պաշտօնեաններու
յաճախակի և անսպասելի փոփոխութիւնները: Փոփոխու-
թիւնը մեծ օղուաներ կունենայ եթէ ժողովուրդին գան-
գատներուն հետեւանքն ըլլայ. բայց այս պարագային մէջ
պէտք չէ որ պաշտօնեային կրած պատիժը մէկ գաւառէն
ուրիշ գաւառ մը փոխադրուելու մէջ կայանայ, այլ հարկ է
որ պաշտօնանկութիւնը վճարուի:

Պէտք է բարեփոխել Մեճլիսը Թեֆրիքները որոնք
իրենց արդի կազմակերպութեամբը չորպաձիներուն շա-
հուն միայն կը ծառայեն: Եւ որովհետեւ այդ Մեճլիսնե-
րուն մէջ Առաջնորդին ներկայութիւնը անհրաժեշտ է,
հարկ է որ հայ անպաշտներն ալ ընտրուին վիլայէթին Ազ-
գային վարչութեան հասանութեամբը, եւ այդ Մեճլիս-
ներուն մազպաթները (ստեւարութիւն կամ յայտա-
րտութիւն) իբր չեղեալ համարուին եթէ Առաջնորդներուն
կողմէն ստորագրուած չըլլան:

Եթէ Պատրիարքարանէն գրուած թաքրիքներուն
դէմ կուսակալ մը մեքենայութիւններ կ'ընէ, որպէս զի ինք-
զինքը արգարացնէ, ան ատեն պէտք է գաւառները լի-
ազօր քովերները դրիւին, եւ ի հարկին հակառակօրոք
երկու կողմերը Պալիս բերուին:

Վերնակողոչքեան եւ պատ'եռոս դրութեամբ է միայն
որ կարելի է բարեփոխել նահանգներուն վարչութիւնը:
Քրիստոնեաններուն բողոքներուն առթիւ Դրսն կող-
մէն կուսակալներուն զրկուած հրամանները հրատա-
րակել կուսակալութեան պաշտօնաթերթին մէջ: Նմանա-
պէս անհրաժեշտ է օսմանսն օրինագրքին հայերէնի
թարգմանուիլը:

Օրէնք մը գնել որպէս զի իսլամութիւն ընդունող-
ները գնէ երեք օր եկեղեցական իշխանութեան յանձ-
նուած մեան: Նմանապէս օրէնք մը դրուի որ կրօնափոխ-
ները պարտաւորէ իրենց նախկին կրօնքին ատեն ունեցած
գաւակներնուն ապրուստը հոգալ:

Չպարտութեան տեղ կանոնաւոր բանակին զին-
ուորները գնել. ասոնք շուտ շուտ տեղափոխուելով չեն
կրնար բնիկ գաղթիկներուն չափ փեսայար ըլլալ:

Թե՛սագոյն աղէտը որ քրիստոնեանները կը տառապե-
ցնէր, անոնց վկայութեան մերժումի օրէնքն էր, ինչպէս
կը հաստատէին բոլոր թաքրիքներն ու տեղեկագիրները:
Այս շարիքը ջնջելու միակ դարման կը գտնէր Յանձնաժո-
ղովը. այն է՝ քաղաքային, առեւտրական եւ ոճրագործա-

կան բոլոր դատերը քաղաքային ատեաններու ձեռնհասութեանը ենթարկել, Եւրոյի իրաւասութիւնը շնչելով: «Այսպիսի բարենորոգում մը, կ'ըսէ Յանձնաժողովը, անհաշուելի արդիւնքներ պիտի ունենայ զեղծութիւններու վերջացման և հաւասարութեան սկզբունքին գործադրութեանը համար:»

Յանձնաժողովը այսպէս ահա կարճատու առաջարկներով մատնանիշ կ'ընէ այն դարձմանները որոնք իւրամական օրէնքին և թրքական վատթար վարչութեան պատճառած աղէտները կրնան դարձանել: Իսկ յետոյ կ'անցնի անհատներու կողմէն գործուած հարստահարութեանց, եւ Ազգային Ժողովին կը ներկայացնէ այն պահանջները որոնք կրնան հնարաւոր ընել Հայաստանի Հայոց հանգիստ վիճակ մը:

Յանձնաժողովը կը յայտարարէ թէ՛ Գիւրաբեր և լեռնցի ուրիշ ցեղերը, որոնց վրայ աւելցած են վերջի ատեաններու նաև Չլըքէզներն ալ, Հայ ժողովրդին համար ճշմարիտ պատուհասներ են, և անդադրուած կորուստի պատճառ մը կայսրութեան գանձուն համար: Այս բարբարոսներ միշտ զինուած են, ո՛ր եւ է տուրք չեն վճարեր, զինուորական ծառայութենէ ազատ կը մնան, եւ բացէ ի բաց ապստամբ վիճակի մէջ են: Հայ ժողովուրդը թիւրք կառավարութեան չէ միայն որ ծանրածանր տուրքեր վճարելու պարտական է, այլ և այդ վայրենիներուն ալ ջախջախիչ հարկեր պէտք է տայ: Օսմանեան կառավարութիւնը կամ պէտք է այդ շուրիները զինաթափ ընէ, կամ պէտք է Հայոց ալ թող տայ որ զէնք կրեն: Այս պայմանաւ կարելի է միայն Հայաստանը փրկել անոնց լուծէն, ու այդ լեռնականները ուզեն չուզեն հանդարտաբարոյ գեղացիներ պիտի ըլլան:

Հսկողութիւն Գիւրաբերտանի եւ Պարսկաստանի սահմանագլուխներուն վրայ:

Յանձնաժողովը կը պահանջէ նաև որ կառավարութիւնը եթէ գեղացի ժողովրդին մինչեւ աստիճան մը ապահովութիւն կուզէ երաշխաւորել պէտք է հեռացնէ այն շարագործները որոնց անունները պիտի յիշատակուին Դրասն յանձնուելիք մանրամասնօրէն գրուած յուցակարութեան մը մէջ:

* *

Հոս կը վերջանայ հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովին համառուօր Տեղեկագիրը որ հայկական ինդրին հիմնաքարն է, եւ որ Ազգային Ժողովին 1872 փետրուար 18 նստին ներկայացուած է: Երբ այս Տեղեկագիրը պատրաստուեցաւ լմեցաւ, Սատրազամ Ալի փաշան արդէն մեռած էր, եւ անոր յաջորդած էր Մահմուտ Եւտիմ փաշա: Պատրիարքարանը նոր սատրազամին ներկայացուց հայ ազգին կրած առտապանքներուն պաշտօնական պատմութիւնը, եւ այն դարձմանները զոր Հայոց Ազգային Ժողովը անհրաժեշտ կը համարէր Հայաստանի վիճակին բարւոքմանը համար: Ո՛ր եւ է ձայն ձուն չելաւ: Ալի փաշային մահէն յետոյ Թիւրքիոյ սատ-

րագամները շատ շուտ կը փոխուէին. Հայկական Տեղեկագիրը ամէնուն ալ յանձնուեցաւ, առանց ո՛րէն քիչ: Ու երբ 1876ին Արևելեան ինդրը կը վերաբացուէր ծանր հանգամանքներու մէջ, Ազգային Երեսփոխանութիւնը ուրիշ յանձնաժողով մը եւս ընտրեց, 1872ի մարմին համանման ծրագրով, այդ նորագոյն տեղեկագիրն ալ յաջորդաբար պիտի ներկայացնենք:

Ռուսութիւրք պատերազմէն յետոյ խելահաս թիւրք փաշաներ քանի քանի անգամ մտերմօրէն յայտնած են հայերէն ոմանց թէ՛ արդարև Հայոց Պատրիարքարանը օսմանեան կայսրութեան թէ՛ ճշմարիտ եւ թէ՛ խելացի բարեկամն է. ու այս համոզման ապացոյցը 1870-72ի տեղեկագրին մէջ կը գտնուէին: «Եթէ մենք այդ տեղեկագիրը նկատողութեան առնելով, կ'ըսէին այդ փաշաները, գործադրած ըլլայինք զայն ո՛չ միայն Անատոլոյի այլ և Բուսթիլի մէջ ալ, այսօր ոչ Բուսթիլի ձեռքերնուս կ'երթար, և ոչ ալ այսքան աղէտ մեր գլխուն կուզար: Այդ տեղեկագրին մէջ ո՛չ մեր անձնասիրութիւնը վերաւորող կէտ մը կար, ո՛չ սուլթանին վեհապետական իրաւունքներուն բռնաբարում մը, ո՛չ եւրոպական միջամտութեան մը հրաւերը:» Այս ցաւը անշուշտ անկեղծ էր, բայց թիւրքերը վարձեալ չխրատուեցան 1877-78ի պատերազմէն եւ անոր աղիտաբեր հետեանքներէն: Քսան երկու տարուան պատմութիւնը անցեալին կրկնութիւնն է, եւ բնական է որ պետութեան ամէն կողմերը կրկնուին վատթար վարչութեան մը նախկին անխուսաբելի հետեանքները: Յեղափոխական շարժում, ապստամբական մարտնչում, եւրոպական միջամտութիւն. ու քանի մը նոր գլուխներ արձանագրուին օսմանեան կայսրութեան քայքայումին տարեկարութեան մէջ:

* *

Պէտք է վերագտնում 1870ի Յանձնաժողովին տեղեկագրութեան, որմէն ամփոփեցի հայ ազգին եւ Դրասն յարաբերութեան վերաբերեալ ինդրները միայն: Բայց այդ մարմինը զգացած էր թէ երբ հայ ժողովուրդը արդար պահանջուիներ կը ներկայացնէ երկրին իշխանութեան, պարտաւոր է նաև պահանջուի ըլլալ ինքն իրեն համար ալ: Այս համոզմամբ կը ծրագրէ Հայաստանի անմիջական պէտքերուն համար կարգ մը բարեկարգութիւններ որոնց գործադրութիւնը ամբողջապէս հայ ազգէն կախում ունի:

Յանձնաժողովը կը ներկայացնէ ուրեմն կարգ մը առաջարկներ որոնք հեռեւեալներն են:

Սահմանադրութեան անթերի գործադրութիւնը Հայաստանի բոլոր նահանգներուն մէջ:

Սահմանադրութեամբ հաստատուած Ազգային վարչութիւնները յարգել տալ գաւառներու տեղական իշխանութեանց կողմէն:

Պատրաստել կարող առաջնորդներ:

Բարեկարգութիւններ ներմուծել թեմերու բաժանու-
մին մէջ :

Առաջնորդարանները զիւանսներ հաստատել եւ պաշ-
տօնեաններ կարգել :

Իսկ մասնաւոր ուշադրութեան արժանի են հետեւեալ
առաջարկները որոնք այսօր իսկ, երեսուն տարի ետքը,
իրենց այժմէութիւնը չեն կորսնցուցած, ճիշտ ինչպէս
հարստահարութեանց եւ բարեկարգութեանց խնդիրը :

Յանձնաժողովը կը խորհի որ թեմական առաջնոր-
դութիւնը պէտք չէ միայն ամուրի եկեղեցականներուն մե-
նաշնորհը համարիլ. քահանաներն ալ այդ պաշտօնին
կողմնու են, « վասն զի, կ'ըսէ տեղեկագիրը, կարող ան-
ձեր որոնք ամուրի մնալ չեն ուզեր, այն ատեն եկեղեցա-
կանութեան մէջ պիտի մտնեն : »

Այս առաջարկը որ անգործագրելի մնաց մինչեւ այսօր,
անտարակոյս օր մը ազգին հոգածութիւնը պիտի գրաւէ :
Յանձնաժողովը իր այս մտածութեամբը լայն մտքի մը
ապացոյցը տուաւ : Իր եկեղեցական անդամներուն մէջ
քահանայ մը չի կար. չորսն ալ, Պատրիարքով մէկտեղ,
ամուրի եկեղեցականներ էին, եւ սակայն զստակարգի
նախանձախնդրութիւն ցոյց չի տուին : Հայ եկեղեցակա-
նութեան մէջ կղերական ոգի չտիրեր. եկեղեցականը իր
ազգին զաւակն է եւ անոր շահերուն պաշտպանը նման
աշխարհականին. ո՛չ իր առաւելութիւնները իր կարգին
մենաշնորհն են, ո՛չ ալ իր թերութիւնները յատկապէս
եկեղեցական արտադրութիւններ :

Իսկ երկրորդ կէտը որ կենսական կարեւորութիւն ու-
նի, հանրային կրթութեան խնդիրն է : « Նահանգներէն
եկած տեղեկագիրներուն ջննութիւնը կը հաստատէ թէ,
կ'ըսէ Յանձնաժողովը, մեր կրած տառապանքներուն
գլխաւոր պատճառներն մէկն ալ նահանգները հայ ժողո-
վրդին կրթութեան պակասութիւնն է : » Եւ սակայն
ճիշտ զիտողութիւն մը կ'ընէ տեղեկագիրը. կրթութեան
խնդիրներով ինչպէս կրնան զբաղիլ այն մարդիկը որոնք
անհամար հալածանքներ կը կրեն, որոնք կեանքը, պա-
տիւր, ստացուածքը ամէն օր մեծամեծ վտանգներու են-
թարկուած են : Ուրեմն Կ. Պոլսոյ հայերն են որ նա-
հանգներու այդ պէտքը պիտի հոգան : Միայն թէ Առաջ-
նորդները եւ նահանգային վարչութիւնները կարող են
հանրային կրթութեան մեծամեծ օգուտներ ընձեռել եթէ
Կ. Պոլսոյ կեդրոնական վարչութիւնը պաշտպանէ զիրենց :
« Առանց այս պաշտպանութեան, կ'ըսէ Յանձնաժողովը,
նահանգներու Ազգային վարչութիւնները կարող պիտի
չըլլան զուրկ ելլել իրենց գէժ հանուած ամէն տեղակ ար-
զեղներու հետ : » Կը փափագի որ ամէն հայ գեղի համար
հանրային լաւ նախակրթութիւն մը պարտաւորիչ ըլլայ,
և վանքերը օգնեն աղքատ գեղացիներուն :

Մեր սերունդը մասամբ զեռ պարոյցն էր, մասամբ
նոր դպրոցէն ելած, երբ հարստահարութեանց Յանձնա-
ժողովը Պոլսոյ Հայոց վրայ պարտականութիւն կը դնէր
Հայաստանի կրթութեան հոգը ստանձնել : Այդ նոր սե-
րունդը իր պարականութիւնը ըմբռնեց և սկսաւ զայն

գործադրել : Եւ ինչպէս որ հարստահարութեանց ջրն-
նութիւնը հայկական խնդիրն ծնունդ կուտար, նմանա-
պէս գեղացի հայուն կրթութեան խնդիրն ալ յեղափո-
խութեան զաղափարին առջեւ ճամբան կը հարթէր : Վեր-
ջին երեսուն տարուան մեր պատմութեան գրուածները
զիպուածի հետեանք չեն, այլ օսմանեան վարչութեան և
հայ ազգին փոխադարձ տրամագրութեանց բնական հե-
տեանքը :

Ներքին բարեկարգութեանց մասը կը վերջանայ այն
եզրակացութեամբ թէ Ազգային Ժողովը առաջին անգամն
է որ Հայաստանի ընդհանուր կացութիւնը նկատողու-
թեան կ'անէ, եւ տարակոյս չի կայ թէ յարատեւող ան-
խոնջ շննքերով այդ վիճակին դարմանը պիտի հայթա-
թէ. ազգային ամէն խնդիրներու մէջ յարատեւութիւնը ան-
հրաժեշտ դարման մըն է յաջողութեան : Ազգային ժողո-
վին կը պատկանի պէտք եղած ուղղութիւնը տալ այս
յարատեւութեան : Միայն թէ յատուկ յանձնախումբերու
միջոցաւ պէտք է ուսումնասիրել քանի մը առաջարկներու
գործադրութեան եղանակները :

Այդ առաջարկներն են. 1. Ընդհանուր վիճակագրու-
թեամբ հասկնալ նահանգներու Հայոց ընդհանուր կա-
ցութիւնը, եւ միշտ քննել զայն. 2. Կարող հոգեւորա-
կաններ պատրաստելու միջոցները. բազմաթիւ քաղաքներ
ու գեղեր զուրկ են եկեղեցական : 3. Հանրային կրթու-
թիւնը ինձմել եւ տարածել : 4. Ազգային կալուածներուն
ապահովութեանը համար, անմիջական տնօրինութիւններ :

* * *

Յարասեւութիւնը յաջողութեան կենսական պայմանն
է, յայտարարած է Յանձնաժողովը. այդ յանձնարարու-
թիւնը ազգին նշանաբանն է եղած : Ու սխալինք կամ ոչ,
իյնանք կամ կանգնինք, բայց միշտ կը յարատեւենք ըն-
թանալ բացուած ճամբէն : Հիմակ երեսուն տարուան
ահագին զոհողութիւններուն կը միացնենք մեծ ուժ մըն
ալ՝ փորձառութիւնը : Անվրդով կը յառաջանանք զէպի
ապագան :

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԽԱԲՈՒՈՂՆԵՐԸ

Թրանսվալի պատերազմը վերջանալու վրայ է. Պօ-
էրները ութ ամիս զիւցազնաբար զիմաղրելէ յետոյ սպառ
սպուռ կը շախշախուէին, ու իրենց երկիրը անգլիական
սեփականութիւն պիտի գտնայ :

Հինգ տարուան ժամանակամիջոցի մէջ հրեք ժողո-
վուրդ իրարու ետեւէ զուհ պացին Եւրոպայի վրայ գրած

վրենց յուսադրութեանը: Հայը, Յոյնը, Պօէրը իրարմէ ժողովրդին տարբեր պայմաններու մէջ ապրելով հանդերձ, մաքի միենոյն ուղղութեամբ գործեցին, եւ միջազգային քաղաքականութիւնն ալ շահերու միենոյն ուղղութեամբ վերջին պահուն գիրենք լքեց: Երկու անկախ պետութիւն ունենալով հանդերձ կազմակերպուած կառավարութիւն, կանոնաւոր դիւանագիտութիւն, եւ բանակ, բաղադրուած գտնուեցան Հայոց:

Մեր յուսախաբութիւնը սակայն ո՛չ Հելլեններուն կը բաժնորէր զարմանքին անշափութիւնը ունի, եւ ո՛չ ալ Պօէրներու դաճութեան համեմատութիւնները կրնայ առնել:

Դրական ո՛ր եւ է երաշխաւորութիւն մեզի քաջալերանք չէր շտապած. Արեւելեան խնդրին պատմութիւնը ցոյց կուտար թէ Եւրոպա միշտ օգնութեան կը հասնի թիւրքիոյ ճնշուած քրիստոնեայ ժողովրդի մը երբ անկախ ուժնապէս կը բողբէ՛ այսինքն ուժին դէմ ուժ կը հանէ. Սասունի զէպքին առթիւ Եւրոպայի իրարանցումն ու միջամտութիւնը այս պատմական ճշմարտութեան ուժ կուտան: Յոյներուն ձեռքն ալ թէն եւրոպական օգնութիւն ապահովող շօշափելի գրաւական մը չի կար, բայց ամբողջ աշխարհի համակրանքը, զոր վայելելու գիտակցութիւնը ունէին, եւ Եւրոպայի մեծ վեհապետներուն հետ իրենց թագաւորին արեւակցութիւնը խոստաւախից զրգոտման համարուեցան: Թրանսփալ կայսերական խոստում ունէր իր ետին: Վիլհելմ կայսրը 1893ին Պօլական դատը գերման վահանին ներքեւ առած էր մեծագոյն յայտարարութեամբ: Ու երբ Ասիա՝ Հայը շարունակեցաւ, Եւրոպա՝ թիւրք բանակը Յունաստանը գրաւեց, Ափրիկէ՝ Անգլիացին թրանսփալ մտաւ, ահա Եւրոպայի վրայ ամէն յուսադրութիւն՝ ենթադրեալ թէ երաշխաւորեալ, հաւասարապէս ունայնութիւն մնացին: Քաղաքական շահերը հաւասարապէս սպաննեցին մարդասիրութեան, քաղաքակրթութեան, արդարութեան դասն ու գաղափարը: Անգլիա Արեւելի մէջ համակերպած էր Ռուսիոյ եւ Գերմանիոյ որոնք եւրոպական լուծիւն կը պահանջէին երբ թիւրքը կը թրածե՞՞ր Հայը: Ռուսիա եւ Գերմանիա թրանսփալի մէջ փոխարինեցին Անգլիոյ 95-97ի Արեւելեան զոհողութիւնները: Քաղաքականութիւնն ալ առեւտրական ընկերակցութիւն մընէ որ իր կրկնատումարը ունի. իրաքանչիւր պետութեան համար Պարսի եւ Պահանջէի գլուխով մը: Հաշիւները ամենուն աչքին առջեւ են, եւ ժամանակ առ ժամանակ կը փոխուին, մնացորդը անցընելով Քաղաքականութեան յաջորդ եղանակին: Խեղացին կամ բաղաւորը այն ազգն է որ երես մըն ալ իրեն բացուած կը մնայ այդ Մայր-Տաճարին մէջ:

Խաբուող այս երեք ժողովուրդներուն եղած վնասները երբ քննենք կը տեսնենք թէ Պօէրներուն կորուստը անգարմանելի է: Իրապէս եւ վերջնապէս զժառանգորէրը եղան: Երբ թրանսփալ անգլիական պետութեան մ հոչակուի, աշխարհիս վրայ չի կայ ուժ մը որ զայն մը անշատելով վերադարձնէ Պօէրներուն: Յոյսը իսկ,

թշուաններու միակ զօրավիշը, խոյս կուտայ Հարաւային Ափրիկէն: Եւ վաղը Պօէրները պիտի մոռցուին, ինչպէս մինչեւ հիմակ կը մնային անծանօթ: Մարդկային քաղաքակրթութեան պատմութիւնը Պօլերներն յիշատակ մը չունի: Գիրք մը, պատկեր մը, արձան մը, երգ մը, դիւտ մը, գաղափար մը չի կայ Պօլերական դրօշմը կրող: Կը մնայ միայն անվեհեր քաջութեան համբաւ մը որ շուտով պիտի նուաղի, մարի ուրիշ գոռումներու աչմուկին մէջ:

Յունաստան նուազ զժառանգ եղաւ ներկային մէջ, իսկ ապագային համար շատ յոյսեր տածելու իրաւունք ունի: Իր նկրթական փնտսները սահմանափակուեցան լոկ մարդու եւ զրամի կորուստի մէջ միայն: Իր երկիրը արշաւող բանակը ձեռնունայն ետ գործաւ, առանց ո՛ր եւ է հողային վարձատրութեան մը ի փոխարինութիւն իր յաղթանակներուն: Եւ Կրետէ ազատեցաւ. ու որ մը Մայր Հայրենիքին կը միանայ: Սակայն եթէ Պօլերները կրնան ըսել թէ «Ամէն ինչ կորսնցուցինք պատիւէն դատ» Հելլեններն ալ պէտք է խոստովանին թէ «բան մը չկորսնցուցինք պատիւէն դատ»: Անշուշտ պատերազմին մէջ պարտութիւնը անպատուութիւն չէ, սակայն 1897ի Հելլենութիւնը կոխը յունական պատմութեան էն տնօր մէկ լին է: Այդ քաղաքակիրթ եւ ազատ ժողովուրդը ոչ միայն թեթեւամիտ երեցաւ, այլ եւ քաջութեան յատկութիւնն ալ չփայլեցուց: Բայց Յունաստանի բաղաւորութիւնը հան էր որ իր գործը թիւրքին հետ էր: Եթէ Եւրոպա կուրի ժամուն չմիջամտեց, բայց ըստ մէկ գարու աւանգութեանը, յետ կուրի այլ ևս թիւրքին երես չտուաւ: Չանազան շահեր այդ կարճ ժամանակամիջոցին մէջ արդէն կարգադրուած էին: Մենք մեր կըրած պատրասններուն մէջ Պօլերներուն դաճութիւնը չը զգացինք, եթէ Յոյներուն չափ ալ բարեբաղդ չգտնուեցանք տակաւին: Մեր գործն ալ թիւրքին հետ է ուստի ապագան կորուսած չենք կարող համարիլ: Արեւելեան խնդրին հաշուարդարութիւնը վերջացած չէ. մեզի ոչ միայն մեծ յաջողութեան մը յոյսը ունենալ ներքի է, այլ եւ հաւատքն ալ. պայմանաւանշուած որ թեթեւամիտ չգտնուինք և օտարոտի շահերու նպաստաւոր անգիտակից գործիքներ չդառնանք:

Թէ Հելլենական, թէ՛ պօլերական զէպքերը իրենց բոլոր հանգամանքներովը հայ ազգին համար ոչ միայն դասեր կը պարունակեն, այլ և քաջալերական յորդորակներ: Կը տեսնենք թէ մեզի վհատեցնելու ծառայող բոլոր պարագաները կրկնուած են ուրիշ ազգերու համար ալ, որոնք քաղաքական անկախութիւն իսկ ունին, եւ իրենք իրենց գործերուն անձնիշխան տէրն են:

ՀԱՅԵՐԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

ԲԱՐԻՉ, 16 յունիս

Այս վերջին շաբաթները Բարիզի Հայութիւնը առիթը ունեցաւ մասնակցելու շարք մը հանդէսներու, իր շրջանակին մէջ ու իր շրջանակէն դուրս, — գեղեցիկ շարք մը զօր երէկ եկաւ փակել այն մեծ ցերեկոյթը որ հայ որբերուն ի նպաստ արուեցաւ Վոսվիլի թատրոնին մէջ:

* * *

Մայիս 3ի իրիկունը, Բարիզի հայ ուսանողներու Միութիւնը գրական երեկոյթ մը կազմակերպած էր ի պատիւ Պ. Լեւոն Բաշալեանի, որ Բարիզ կը գտնուէր:

Հանդէսին կը նախագահէր Պ. Արշակ Զօպանեան, որ լայն տեսութիւն մը ընելով վերջին 10—15 տարիներու հայ գրականութեան կրած կերպարանափոխութեանը վրայ, որոշեց Պ. Բաշալեանի կատարած գերըտալու համար մեր լեզուին իր գրեթէ վերջնական կազապարը, ճիշտ ու ճապուկ: Յետոյ ցոյց տուաւ Բաշալեանի արի, ազնիւ ու միշտ զէպի գեղեցիկ իտէաշնորը ձգտուած գրականութիւնը, ուր արուեստի մտահոգութիւնը միշտ համընթաց է հայրենական ու հայկական նպատակներուն յարակնդէտ մնալու բաղձանքին:

Պ. Լեւոն Բաշալեան մէկ քանի խօսքով յիշեցուց այն պարտականութիւնը զոր սնին հայրենիքէն հեռու զըտնուող բոլոր Հայերը երբեք իրենց աչքին առջեւն չհեռացնելու արտաութեան երկիրը որ մերն է և որ իր ցաւերովը ա՛լ աւելի սիրելի է մեզի այսօր: Մեր ամէնուն մտածումը ըլլալու է թէ մեր տարագրութիւնը կայք մըն է ոկ, ու թէ օր մը պիտի դառնանք մեր տեղը՝ մերիններուն տանելու ինչ որ իւրաքանչիւրս ամբարած ենք եւրոպական քաղաքակրթութենէն ու լոյսերէն, անոնցմով սկսելու համար բեղմնաւոր եւ ընդարձակ դործունէութիւնները:

Երեկոյթին երկրորդ մասին մէջ, Պ. Սուրէն Պարթեւեան կարգաց համալրական ուսումնասիրութիւն մը վերջին քաւորդ դարու հայ մատենագրութեան ընթացքին վրայ, երևան բերելով այն տեղը զոր Բաշալեանի գրականութիւնը կը զրաւէ հոն:

Յետոյ կարդացուեցան Բաշալեանէ մէկ քանի էջեր, Կ. Պօլսոյ Հայրենիքէն ու Նոր Կեանքէն:

* * *

Երկու շաբաթ հոգն էր որ Գաֆէ Վոյլոփ մէկ սրահը հացկերոյթի սեղանի մը շուրջը հաւաքուած էին քսանի չափ զրազէտ, բժիշկ, արուեստագէտ, ճարտարագէտ, ուսանող կայլն, պատասխանելով Անանիոսի խմբագրապետին

տին հրակրին՝ տօնելու համար Մանուկեան զիտնակաւնին ու Շահին նկարչին ձեռք բերած յաջողութիւնները իրենց ասպարէզին մէջ: Հեռադիրներ ու նամակներ Եւրոպայի ամէն կողմերէն համակրանքի ու խնդակցութեան խօսքեր բերած էին բոլոր այն հայերուն կողմէ սրունք իրենց ցեղին բարի համբաւին ճառագայթմանը համար երախտազէտ կը մնան այդ երկու երիտասարդներուն:

Այդ մտօք էր որ խօսեցաւ հանդէսին նախագահը, Պ. Արշակ Զօպանեան, բացատրելով այն գերագոյն ընդունակութիւնները որոնցմով Հայեր, ուղղակի իրենց երկրէն քաղաքակրթութեան մեծագոյն վառարաններէն մին փոխադրուած, կուրղ կ'ըլլային մէկէն հասնել այն բարձունքներուն, — մին գիտութեան և միւր արուեստի մէջ —, ուր վարպետի համբաւները կը սկսին: Տօնելով այդ երկու Հայերուն յաջողութիւնները, որոնք Եւրոպայի առջեւ գործնական դասի մը պէս են մեր ցեղին հիմնական բարեմասնութեանց ի շատագոյնութիւն, մեր յարչանքի հարկը մատուցած կ'ըլլանք ցեղին որուն զաւակներն են անոնք, եւ որոնք անոր ետ կը դարձնեն, իր բարոյական ժառանգութեանց վրայ նոր փայլ մը աւելցնելով, տրիտուրները որ անկից ստացած են:

Նոյն մտօք խօսեցան Պ. Լեւոն Բաշալեան, Տր. Մուսեան և Պ. Մելիք-Գարակէօզեան, ու երեկոյթը շարունակուեցաւ յետոյ համախումբ ուրախութեան մը զուարթութեանը մէջ:

* * *

Պ. Վահրամ Սվաճեան հետզհետէ ինքզինքը կը հատատէ այս մեծ քաղաքին մէջ, ուր արուեստաշէտին համար դժուար է համբաւ մը շինել, — մանաւանդ արուեստներուն ամէնէն դժուարինն՝ երաժշտութեան՝ մէջ: Յաջողաբար երկու երեկոյթ տուաւ, մին անցեալ շաբաթու, և միւրը յունիս 13ի ուրբաթ զիշեր, Ժոռնաւալ լրագրին տօնատրահին մէջ: Այս անգամ, հայ արուեստագէտին նուագահանդէսին յայտագիրը կը կազմէին իր հեղինակութիւնները լոկ, որոնց մէկ մասը կը կազմեն արևելեան մօրիֆներ զորոնք Սվաճեան յարգարած է մեծ արուեստով մը: Երկու նուագահանդէսներուն ալ ունկընդիրներու բաւական ստուար բազմութիւն մը կար, զրեթէ բացառապէս ֆրանսացի ու ամերիկացի, սր խանդոտ ընդունելութիւն մը ըրաւ երիտասարդ արուեստագէտին:

Յիշենք այստեղ Ժոռնաւալի զնահատուած Սվաճեանի առաջին նուագահանդէսին մասին:

«Պ. Սվաճեանի ազգեցիկ զարնուածքը եւ ինքնատիպ հեղինակութիւնները իրացոյն էլ բնկարացուցին սնկընդիրները: Պ, Սվաճեան, արտասովոր կորովով մը և նշանաւոր փափկութեամբ մը օձտուած միւսնգամայն, կրցաւ դաշնամուրէն քաղել ձայնի ճշմարտապէս զարմանահարալ արդիւնքներ: Նախերգանք կը, պալլաւ մը, օրօր մը, որոնք ծափահարութեանց մէջ կրկնել տրուեցան, խանդավառութեամբ յափշտակեցին ընտրեալ բազ-

մութիւնը: Իր սքանչացողներուն շատին խնդրանքին վրայ, Պ. Սվաճեան ընդհուպ նոր նուագահանդէս մը պիտի սայ իր այնքան նշանաւոր հեղինակութիւններով:»



Ֆրանսական ոստանին մէջ հայ անունին յաղթանակին համար մեծագոյն ատիժը եղաւ այն ցերեկոյթը որ այսօր տեղի ունեցաւ մեծ արուեստագէտին, Տիկին Ռէժանի թատրոնին մէջ: Ֆրանսայի այսօրուան զրական էն մաքուր անժխտելի փառքը, Անագոլ Ֆոանս, խօսեցաւ հոն Հայոց մասին խորին յուզումով և անսահման համակրութեամբ, ու Ֆրանսայի թատրոններուն էն մեծագոյն անունները եկան իրենց մասնակցութիւնը նուիրել հանդէսի մը որ, որչափ որբերուն նիւթական նւագատ մը զրկելու սահմանուած, այնքան ալ հայ անունին, հայկական դատին ու հայկական տառապանքին շուրջը հաստատուիմ էր Ֆրանսայի փառքը կազմող արուեստագէտներու եղբայրական համակրանքին:

Այս ամէնը իրագործողը, պէտք է ըսել բարձրաձայն, միակ անձ մըն է, Պ. Արշակ Չօպանեան, որ կամքի ու բանխմացութեան հրաշքով մը, մէն միայնակ, կրցած էր բարի կամեցողութիւններ արթնցնել մեր անունին շուրջը ու յետոյ բերել զանոնք համախմբել այս գեղեցիկ հանդէսին մէջ: Անոնք միայն որոնք զիտեն այսպիսի գործի մը բոլոր զծուարութիւնները, անոնք միայն կրնան գաղափար մը կազմել այն անխոնջ ու անվհատ կորովին, գերազանց վարուողութեան ու կազմակերպող ոգիին մասին որ պէտք էր Չօպանեանին՝ ի զուտ հանելու համար այդ գործը, ու այսքան անթերի յաջողութեամբ:

Չորեքշաբթի օրուընէ արդէն, Անագոլ Ֆոանս տեսակ մը նախերգանքը կ'ընէր գալիք հանդէսին՝ Ֆիկարօի առաջին սինակներուն մէջ ընդարձակ յուզուածով մը, հայկական շարժերուն պատմութեանը և հայ որբերուն նուիրուած:

Յօգուածը կը սկսի Տր. Տիլլոնի ծանօթ պատմութեամբը Մոսթիկօ քիւրտ աւագակին մասին, որ բանադրուած էր ո՛չ թէ հարիւրաւոր Հայեր սպաննած, գեղեր կողոպտած ու այրած ըլլալուն համար,—ասոնց փոխարէն ընդհակառակը շքանշանի կ'արժանանան իր ընկերները— հապա թիւրք սուրհանգակ մը կողոպտած ու թիւրք կին մը բռնաբարած ըլլալուն համար:

Պ. Անագոլ Ֆոանս կ'անցնի յետոյ Հայոց այսօրուան ողբալի կացութեանը, եւ մանաւանդ որբերուն վիճակին:

«Այդ որբերուն համար է որ ձայն կը բարձրացնեմ այսօր: Իմացայ թէ Ֆրանսա ապաստանած հայ հայրենասէր մը, Պ. Արշակ Չօպանեան, շատ բարձր բանաստեղծ մը՝ խորիտ ու զորովալիբ հոգիով, հանդէս մը կը կազմակերպէր ի նպատակ իր դժբաղդ երկրին դժբաղդ որբերուն: Ինձի ըսին նաև որ պաշտելի տաղանդով զերասանուհի մը, որ բոլոր շնորհներն ունի իր անձին և իր սըր-

տին մէջ, Տիկին Ռէժան, իր արուեստին հրապոյրը կը բերէր այդ հանդէսին:

«Առանց աւելին փնտռելու և առանց մէկու մը խորհուրդ հարցնելու, թղթին վրայ գրեցի եւ Ֆիկարօին զրկեցի մէկ քանի աղաչական տողեր ի նպատակ այդ տղաքներուն, որոնց համար արուեստական հոգիով կին մը, Միս Սդելուրըն, կ'ըսէ թէ աշխարհիս ամէնէն ծանրախոհ ու ամենէն անուշ տղաքներն են, և թէ կարելի չէ զիմանալ անոնց սրտառուչ սեւ աչքերուն պաղատանքին:»

Պ. Անագոլ Ֆոանս կը նկարագրէ այդ որբերուն հոգին, մէկ քանի պատմութիւններու մէջ զորոնք Չօպանեան Նոր Կեանքէն քաղելով (տեսնել «Վարդուան Հայաստանը» վերնագրով շարքը) մեծանուն վարպետին հարողով էր:

Յօգուածին վերջին մասը կ'արմէ ներկայացնել այստեղ:

«Գրիտտոնեայ Երոպան, Ֆրանսան ի զուտ, պէտք է ապրեցնէ և հազուեցնէ մանչերն ու աղջիկները այդ Արևելքի քրիստոնեաներուն որոնց օգնութեան չհասաւ և որոնք շարժուեցան, ի մեծ ամօթ իրեն: Քառսուն տարի առաջ, Մարոնիները, որոնք կը հալածուէին, ինչպէս այսօր Հայերը, իրենց նայուածքը դարձուցին դէպի պաշտպան ազգը: Լիբանանցի ծերունի մը, զոր տիրոզի ձիւտընէր իր տանը առջեւ խողխողած էին և մեռած կարծելով հոն ձգած, շտկուեցաւ, իր նորատի զաւակը կանչել տուաւ, եւ երբ տղան իր մօտը եկաւ, ձեռքէն բսնեց ու ըսաւ.

—Երևէք, կ'ուզեմ որ մեծ երգում մը ընես ինձի: Երբոր Ֆրանսայի քրիստոնեաները իրենց Լիբանանի եղբայրներուն օգնութեան զան, գերեզմանատունը վազէ, գերեզմանիս վրայ ծունր զիր եւ ականջիս մըմնջէ աւետիսը, որպէս զի ես ալ, հողին տակ, Լիբանանի ուրախութեամբը թունդ ելլեմ,

«Այսպէս խօսեցաւ, ու մեռաւ: Ու շատ շանցած Երևէք ֆարամ կրցաւ երթալ գերեզմանին մէջ հանդիման հօրը ըսել:

—Հա՛յր, խաղաղութեամբ ննջէ հա՛յր, ուրախութեամբ ննջէ: Յոյսդ զուր չէր: Ֆրանսացիները եկան, եւ մեր ժողովուրդը մխիթարուած է:

«Անկից ի վեր, Տարոսի կատարներէն մինչեւ Արարատի լեռնաղաշտերը, երեք հարիւր հազար զոհ ինկան, և իրենց գայրացած ստուերները մեզի կ'աղաղակեն,

—Չեկաք: Մենք մեռանք եւ մեր զաւակները պիտի մեռնին: Որպէս զի խաղաղութեամբ ննջենք, հաց տուէք մեր որբ զաւակներուն:»

Վոտովիլի թատրոնը այսօր լեցած էր մեծ բազմութեամբ մը, որուն մէջ Հայերը բարեբաղդաբար բացառութիւն չէին կազմեր, երբոր Անագոլ Ֆոանս ցերեկոյթը բացաւ, խորին զգացումով մը կարդալով իր Ֆիկարօի յօդուածը՝ զիրեն յետոյ խօսքով ալ իր բարձր հեղինակութեան անսահման կարեկցութիւնը բերելով մեր տառապանքին,

այս մեծ առթիւ ալ նորէն ինքզինքը ցոյց տալով իբր ամենէն համոզուած ու խանդոտ համակիրներէն մին հայկական դատին Ֆրանսայի մէջ, — արդիւնք մը որ դարձեալ Պ. Զօպանեանին գործն է:

Յերեկոյթին բուն արուեստագիտական մասին վրայ մանրամասն պիտի չխօսիմ, Նոր կեանքի ընթացողներուն մեծամասնութեանը համար անմիջական շահեկանութիւն մը չգտնելով հօն: Թող բաւէ միայն զիտնալ թէ Բարիզի մեծագոյն քատրոններուն մեծագոյն արտաշնտարգեաները իրենց տաղանդը եկած էին ի սպաս գնել այսքան ազնիւ առաջադրութեան մը, ներկայացումով, երգով, արտասանութեամբ:

Յերեկոյթին հայկական մասը կը կազմէին Պէշկիթաշլեանի կոյսիւն Բնարին հայերէնէ թարգմանութիւնը զոր արտասանեց Պ. Տը Մաքս, երեք կտոր նուազ Պ. Վ. Սըվաճեանէ, որոնց մին Արուսազդ քազաշորին որսորդարիւնը անունը կը կրէ, և Զօպանեանի Օրօր Մայր—Հաստաւեանէ զոր Տիկին Սըկոն—Վէպէր, սև շղարչներու մէջ փաթթուած իր ուրերգական գեղեցկութեան մէջէն արտասանեց այնպիսի խորունկ յուզումով մը զոր ունկընդիր ո՛չ մէկ Հայ պիտի մտնայ, և ուր, բարձրագոյն արուեստի մը մտգական զօրութեամբը, մեր բոլոր ցաւերը ու մեր բոլոր յոյսերը կը հեծեծէին ու կը գոռային: — Այս հայկական մասին մէջ չե՞նք կրնար դասակարգել նաև Գոնէլէի Բօշիօքդին (Պողիկոսս Հայ իշխանը) չորրորդ արարուածը, զոր Մունէ—Սիլլի և իր ընկերները ներկայացուցին այն չըլլալիք կատարելութեամբ զոր Թէկաղը—Ֆրանսէի մէջ միայն կարելի է գտնել:

Այս գեղեցիկ հանդէսը կազմակերպողը՝ զայն շատ գեղեցիկ կերպով փակեց բանախօսութեամբ մը որուն նիւթն էր « Հայ ցեղին զերը պատմութեան մէջ »: Զօպանեան ցոյց տուաւ հայութեան կատարած գործը, քաղաքակրթութեան սահմանազլխին վրայ դարերով պատուար կանգնելով եւ կուրծք տալով ասիական հրոսներուն խուժումին, մինչև որ հզօրագոյն ուժերուն առջև ջախջախուեցաւ ինկաւ: Բայց ան միշտ հաւատարիմ մնաց իր ըստանձնած դերին, ու իրմէ շատեր տարբեր աշխարհներու մէջ, պատմութեան ամբողջ տեսողութենէն մինչև այսօր ապացոյց տուած են իրենց արեանը խանուած բարձրագոյն ձիրքերուն: Մեր ցեղին զերագանց յատկանիշներէն մին է այսպէս չհրաժարել իր գոյութեան իրաւունքը կազմող զերին գեղեցկութենէն, նոյն իսկ արիւնագանգ գոհողութիւններու մէջէ: Պողիկոսսը, զոր Թէկաղը—Ֆրանսէի խումբը ներկայացուց այսօր, խորհրդանշան մըն է այն անվիանդ արութեան որով Հայը, երէկ Հոռոմայեցիին կամ Ասիացիին, ինչպէս այսօր Թիւրքին գէժ, գիտէ իր արեան գնով անխախտ պահել իր հաւատքը, — ըլլայ ան իր հայրերուն հաւատքը, ինչպէս նաև հաւատքը իրեն սահմանուած գերագոյն ճակատագրին ստուգութեանը: Մեր խոնարհ անկիւնէն, այսպէս միշտ յառաջապահները եղած ենք արևմտեան մտածումին ու արևմտեան շահերուն: Այսօր իսկ, իբրոր երոպական

պետութիւնները ձեռք բերին, երկաթուղիներու արտօնութիւններով, կուռան մը փոքր—Ասիոյ մէջ, ասիական հայկական արիւնին փրկանքը եղաւ: Ու կը սիրենք յուսալ որ օր մը, հատուցման վայրկեանին, ասիական պիտի չմոռցուի անոնցմէ որոնք մեզի կը պարտին իրենց յաջողութիւնները:

Երկարատեւ ծափահարութիւն մը ընդունեց այս բանախօսութիւնը: Այդ ծափահարութիւնները, մենէ շատերուն քով, կ'ուղղուէին նոյնքան զրագէտին որքան հայրենասէրին որ ահա չորս տարիէ ի վեր Բարիզի մէջ անդու կ'աշխատի մեր դատին շուրջը ամենէն թանկագին համակրանքները հրահրելու, եւ որուն հետ մենք ալ իրաւունք ունինք հպարտանալու իր մինչև հիմակ ձեռք բերած արդիւնքներուն վրայ, որոնց էն գերագանց համադրութիւնն էր երկկի հանդէսը,

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ԲՈԼՈՐԸ

Կ. ՊՈԼԻՍ, 8 յունիս 1902

Պատրիարք ունի՞նք թէ ոչ: Երևոյթով ունինք, էութեամբ ոչ: Օրմանեան պատրիարք հրաժարեալ է, բայց հրաժարեալ ալ չէ. պատրիարք է. բայց պատրիարք ալ չէ: Հեռագիրը արդէն Եւրոպայի իմացուց Հայոց պատրիարքին իր թիտը վերագարձը մայիս 24ին, Երլազի հետ պայմանադրութեամբը որուն համեմատ պիտի գաղղէին բացառիկ կերպով Հայոց համար տեղի ունեցած գժուարութիւնները, Սիսի կաթողիկոսական ընտրութեան մէջ ազգին բոլոր իրաւունքները պիտի պահպանուէին, յետաձեաց զինուորական տուրքերու խնդիրը պիտի կարգադրուէր: Պատրիարքը այս Երլազական գեղադրին խոստումէն անմիջապէս առողջացաւ, և վազն ի վազը Պատրիարքարան գիմեց: Ընդհանրապէս կարծուեցաւ թէ գոնէ այս անգամ քանի մը խնդիրները քիչ շատ պիտի կըրնան կարգադրուիլ: Այս յոյսը կը տարածուէր ոռուսական միջամտութեան մը զրոյցներուն իրականացման երևոյթին պատճառաւ զլիսաւորապէս: Պատրիարքը շարժ մը կը սպասէ, բայց իր առողջացմանը համար խոստացուած պեղագիրը ո՛չ կուգայ, ո՛չ ալ կը շինուի: Նմանութիւն չըլլայ, բայց Հայաստան առաջ մը ունին որ արդի կացութեան կը յարմարի. « էշն էղրերմտօքը պարկով գարի, կուժ մութնէ կուլի իրիկուն, ո՛չ պարկ կայ, ո՛չ գարի: » Թող սպասէ պատրիարքը. ո՛չ զժուարութեանց բարձուժ, ո՛չ տուրքերու թեթևացման նշան մը, ո՛չ ո՛ր և է զիջողութիւն կաթողիկոսական ընտրութեան համար: Նորէն կը պարտաւորուի իր տունը քաշուիլ: Ալ վարժեցանք տեսնել որ Օրմանեան պատրիարք արեգական կանոնաւորութեամբ իր տունը—իր մարը—կը մտնէ, ու որոշեալ մամանակի մըն

ալ կանոնաւորապէս Գում-Գսբու կը ծագի, յառաջընթաց արշաւոյս ունենալով Երլտրզական թիկնապահ մը: Այս անգամ եւս երկնալով այդ թիկնապահը պատրիարքին կ'առաջնորդէ Երլտրզ ուր սուլթանին առաջին քարտուղարը կը յանձնարարէ վերադառնալ իր աթոռը, եւ սպասել իր առաջարկներուն գոհացուցիչ լուծմանը:

Խոստում, առանձնացում, վերադարձ առժամանակեայ կարգադրութիւններ են, սպասելով ուսական ըսպանալիքներուն իրականացմանը կամ վիժումին. սուլթանն ալ ուսական շարժումներուն համեմատ պիտի շարժի: Իսկ առ առայժմ երկու թէն գատելով ծանր յուսախաբութիւն մը կրելու վախը ունինք: Ռուսական ծանուցադիրը յանձնաժողովի մը հելալէ եղաւ, ինչ որ թրքական ըմբռնումով պարտաւ կը նշանակէ: Քանի մը կարեօր պաշտօնեաներ իրենց հետ ունենալով ուսական դեպանատան առաջին թարգման Պ. Մաքիմովը կը կազմեն այդ Յանձնաժողովը որ արդէն երկու նիստ ըրած է: Պարզապէս ժամանց:

Ու ժողովուրդը կասկածէ բռնուած կը սկսի հարցնել թէ արդեօք ինչ նոր դաւ մը կը պատրաստուի Հայաստանի վէժ: Ինչպէս տեղոյս Երոպացիներն ալ կը հաստատեն, ուսական վերջին ազմկալից միջամտութիւնը եթէ խղճ մըն է, Հայաստանի վիճակը շատ աւելի պիտի ծանրանայ:

Նորանոր յօտալուտ ազգայնորդ սարսափը կը տիրէ ուսական սահմանազխի մերձակայ գաւառները: Պայտալէն եւ Ալաշկերտէն բազմաթիւ նամակներ հասած են հոս աղաչելով, պաղատելով որ ո' եւ միջոց գործադրուի խափանելու համար սահմանազխէն դէպի թիրքիա նոր արշաւանքի մը խորհուրդները, որոնց լուրերը թիրք պաշտօնեաները կը տարածեն, յայտարարելով թէ՛ «առաջին անգամ որ Ռուսաստանէն զինեալ հայեր ոտք կոխեն թրքական հողը, թիրքերն ալ ոչ Ալաշկերտ, ո'չ Պայտալի մէջ հայ մը որջ պիտի թողուն»: Հոս, Պալիս, կասկածներ կան թէ գուցէ առնչութիւն մը ըլլայ կոտորածներուն նախապատրաստութեան և ուսական ազդարարութեանց միջև: Յուսանք և մաղթենք որ դէպքերը անհիմն հոչակեն այս կասկածներն ու երկիւղները:

Մինչ մտքերը ապագային համար այս մտահոգութիւններով պաշարուած են, ներկային մէջ պատրիարքին արուած խոստումներուն առթիւ կատարուած խաղերը թէ՛ ժողովուրդը կը զարագնեն և թէ կը վախցնեն որ սուլթանը արտաքին ուժ մը գտած է:

Պատրիարքին արուած խոստումներուն մէջ կարեւոր տեղ մը բռնած էր Հայոց երթևեկութեանց համար ընծայելիք դիրութիւնները:

— Ամէն հայ ազատ է ուզած տեղը երթալ գալ, կը յայտարարուի Դոնէն, միևնույն յայտնող շեշտով մը բայց անմիջապէս կազդարարուի պզտիկ տեղում մը:

— Ամէն հայ ազատ է երթևեկել, բաւական է որ իր վրայ ո' եւ կասկած չհրաւիրէ:

Ո՞ր կը ս'սի կասկածը, ո՞ր կը վերջանայ թրքական աչքերը Հայու մը մօրուքը այսպէս թէ այնպէս կըտրուած ըլլալու չուկեալէն մեկնելով կրնան կասկածներու անծայրածիր հորիզոն մը առջնին պարզուած տեսնել, մանաւանդ երբ իբր հեռադիտակ ալ պաշտօնէից քսակնեը կը դործածուին:

Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրը կը մնայ հոն ուր էր: Երլտրզէն կը յայտարարուի թէ հայերը ազատ են Սիսի կաթողիկոսը ընտրել ըստ իրենց հինաւուրց իրաւունքներուն. իսկ դատական պաշտօնատունը կը յայտարարէ թէ այդ խնդիրը իր ձեռնհասութեան կը պատկանի և ոչ թէ Երլտրզին: Բայց ո՞վ կրնայ երեւակայել թէ նախարարութիւն մը իրեն յատուկ կամքը ունենայ առանց սուլթանէն հրաման ստանալու: Ատլիէն ուրեմն իր կամքով կը պահանջէ որ կաթողիկոսական ընտրելիներուն ցուցակը նախապէս կառավարութեան հաղորդուի, ու Դուռը անոնց մէջէն անհաճոյ անունները ջնջել յետոյ, ընտրութիւնը կատարուի սրբազրեալ ցանկին վրայէն: «Ո՞չ ապաքէն միւս բոլոր հոգեւոր պետերուն ընտրութիւնը այս եղանակաւ կը կատարուի, ինչո՞ւ ուրեմն հայերը առանձնաշնորհեալ բացառութիւն վայելեն:»

Պատրիարքը ի զուր կը յայտարարէ թէ հիմակ ըսկըզբունքի խնդիր յարուցանելու ատենը չէ, եւ ինք կը վստահեցնէ կառավարութիւնը թէ սուլթանին հաճելի եկեղեցական մը պիտի ընտրուի կաթողիկոս: Բայց դատական պաշտօնատունը ականջ չիխնար, վասն զի կուզէ առիթէն օգտուիլ մեր մէկ մեծ իրաւունքը մենէ խելու համար: Ու անգամ մը որ այդ սկզբունքը ընդունուի թէ Դոնէն սրբազրուած ցանկի մը վրայէն պէտք է կատարել կիլիկիոյ կաթողիկոսին ընտրութիւնը, ալ կարգը պատրիարքական ընտրութեան եղանակին կուզայ: Վերաբերենք Սահմանադրութեան մը մէջ այդ օրինակ տրամադրութիւն մը մտցընելու պահանջում կայ: Ու կարգը պիտի գայ առաջնորդական ընտրութեանց: Բայց պատրիարքը պարզապէս աւանդապահ մըն է ազգային իրաւունքներուն, և զանոնք վաճառելու բացարձակապէս անկարող է. մանաւանդ որ հիմակ իր վրայ խիստ հսկողութիւն մը հաստատուած է:

Չինուորական յետամնաց տուրքերու խնդիրն ալ ո' եւ է փոփոխութիւն չէ կրած. Դոնէն հրահանգներ կ'արձակուին որպէս զի այդ տուրքերը ժողովրդին բաշխուին, բայց միևնոյն ատեն տեղական իշխանութիւնները ականջ չեն կախեր այս հրամաններուն: Ո՞վ կը խաբեն: Ինչպէս հնար է որ դաւառական պաշտօնեաները չհնազանդին սուլթանին հրամաններուն, եթէ զաղտնապէս հրահանգ ստացած չըլլան:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Պաշտօնական հրատարակութիւններէ, օրագրական թղթակցութիւններէ աւելի ընտանեկան նամակներն են որ Հայաստանի ողորմուկ վիճակին վրայ սրտազրաւ դաղափար մը կուտան: Տուներու ներքին կեանքի ցաւազին հծծիւնն է որ կը լսենք առանց արհեստական հնարքներու, առանց տխրութեան գեղարուեստին միջամտութեանը:

Այդ նամակներէն մէկը նախորդ թուով մը հրատարակեցինք: Հիմակ Սիլիստրէէն նմանօրինակ ուրիշ նամակ մըն ալ կը հաղորդուի մեզի, եւ հետեւեալները կը քաղենք անկէ:

Ք.—Գ. 18 ապրիլ 1900

Սիւրբի եղբայր իմ

«Ձեր զրկած մարտ 11, 15, 23 թուագրեալ նամակները ստացանք Ս. Յարութեան օրը: Այս հրաշալի օրը կրկնապատիկ ուրախացուցիր զմեզ. նամակին մէկուն ծոցովը ելաւ երկու գաղղիական ոսկու ընկալազիր մը որ անմիջապէս ստացանք:

«Կուրանք յայտնել մեր խորին շնորհակալութիւնները որ այսպիսի օրեր մեզի ուրախալի կ'ընեն բոլոր սրտի ու բազկի առատաձեռնութեամբ, կ'անհետացնեն մեր սրտի ցաւերը: Այդ անակնկալ բարիքները որ մեզի կը նուիրես կը թուի մեզ թէ երկնային պարգեւներէն կ'ընծայուին. վասն զի վիճակնուս նկարագրութիւնը երբ ընենք քարեր մինչ իսկ լեզու կ'ելլեն երախտիք ընելու և օգնելու կարօտելոց: Որովհետեւ այն աստիճան նեղութիւն, աղքատութիւն ու չքաւորութիւն կը տիրէ քաղքիս մէջ որ չեմ կըրնար զրոյս նկարագրել: Գունաթափ եղած ենք, նմանելով հողէն ելած արարածներ, ու տյւանդակ կերպարանափոխութեան ենթարկուելով:

Տարբերու գանձումը անդադար կը շարունակուի, ու որ չունի երեք ամիս բանտ որոշած են:

Գիւղերը մանաւանդ ժողովուրդը սովածաւ կ'ըլլայ: Քանի մը կ'ինքեր գեղերը խենդեցան վայրի խոտեր ուտելով: Առեւտուր ըսած բանը չի կայ. այս ու այն կողմը երթալը սաստիկ արգիլեալ է: Յորենը որ հիմա 140 զսուրու է չարեկը, երթալով կը բարձրանայ Ուստի կ'աղաչեմ այդ կողմը գտնուող մեր եղբարց պատմես մի ըստ միովէ, և օգնեն իրենց ընտանիքներուն: Կը լսենք, կը տեսնենք որ օտար անձերէ օգնութիւն կը զրկուի այս ու այն կողմերը. իսկ մեր հայրենակիցները քարացուցեր են սրտերնին: Կ'իմանանք թէ մեր երկրացիներէն կան ունեցողներ և անոնք ալ չունեցողներուն պէս կ'ընեն, եւ երեսի վերայ կը թողուն ընտանիքնին: Բայց անոնց զաւակաց աղի արցունքը թո՛ղ չկարծեն որ իրենց պիտի մնայ:»

* * *

Այդ նամակին վերջին տողերը սրտի ճիշ մը կ'արձակեն: Երկու ոսկիով քիչ մը շունչ առնելու կարողները կը կարեկցին իրենց շուրջը գտնուող ուրիշ թշուաւներու որոնց սակայն օգնութիւն մը ընելու նիւթապէս անկարող են: Մէկ կամ երկու ոսկիով թէ՛ ապրիլ և թէ՛ ապրիլեցնել հնարաւոր չէ: Ու կարեկցութիւնը զայրոյթի կը փոխուի երբ կ'իմացուի թէ թշուառութեան մէջ տառապողներէ ոմանց ամուսինները, հայրերը երկրէն դուրս գտնուած ատեննին քիչ թէ շատ բան մը կը շահին ու իրենց ընտանիքին բաժին մը հանելու կը մոռնան: Մենք ալ գիտենք թէ կան պանդուխտներ որոնք եթէ քիչ մը աւելի աշխատութեան յանձնառու ըլլան, կամ իրենց բերնէն քիչ մը բան կտրեն պիտի կրնան օգնութիւն մը հասցնել իրենց խեղճ ընտանիքներուն: Բայց կամ ծոյլ ծոյլ որճարանէ որճարան կը դեզերին, կամ քիչ մը աւելի աշխատել չեն ուզեր, և, ինչ որ յաճախ կը պատահի, գաւաթ մը օղիի, սուրճի զրկանքը կրելու յօժարակամ չեն:

Պէտք է այլ ևս գիտնանք թէ տարին տասերկու ամիս Անգլիա, Ամերիկա չեն կարող օգնութեան հասնիլ Հայաստանի ժողովրդին: Արտաքին աջակցութիւնը ծանր բացս ունի պարագաներու մէջ միայն սպասելու է, ինչպէս ուրիշ ժողովուրդներ ալ մեծ աղէտներէ յետոյ համաշխարհային նպաստի կը կարօտին: Պէտք չէ նաև մտաբերել որ մեծ քաղաքներու բարեկեցիկ հայրեր կարող են մեծամեծ օգնութիւններ հասցնել Հայաստան: Եթէ յօժարակամութիւն իսկ ունենան, անհնարին է որ բաղձանքնին իրականացնել կարողանան: Քանի մը տասնեակ հազար իսկ հայերու ամբողջ հարստութիւնը Հայաստան ալ որ զրկուի, չենք կարծեր որ միլիոնով համբուռներու մէկ երկու ամիս բաւէ: Իսկ երբ յօժարակամութիւնն ալ կը պակսի քիչ թէ շատ աջակցութեան համար, ինչպէս փորձով գիտենք, ա՛լ ամէն մարդ իր գլխուն ճարը նայելու է:

Ամէնքս ալ կը ջանանք որչափ կարելի է Հայաստանի վիճակին գարմանը շուտ գտնել. բայց փափաքները եթէ մեր կամքէն կախում ունին, անոնց իրականացումը բոլորովին մեր կամքին տրամադրութեան ներքե չէ: Եւ մինչ այս մինչ այն, հարկ է ապրիլ որպէս զի լաւագոյն օրեր վայելել հնարաւոր ըլլայ:

Արտասահման գտնուող իւրաքանչիւր հայ իր ընտանիքին գահիճն է, և ազգասպան մը, եթէ ամէն հնարաւոր միջոց ի գործ չդնեն երկիրը զրամական գոնէ պղտիկ օգնութիւն մը հասցնելու համար:

ԺԱՄԱՆՅ

ԱՐՈՒՆԵՍՏԱՀԱՆԴԷՍ ԳՍՅՈՂ ԿՈՎԿԱՍՅՈՒՆ

(1889ին)

Զարթուածանի թուղթերուն մէջ Լոնտոն փնտառուքի մը պահուն ձեռքիս դպան 1889ի Մասիսին մէկ քանի թիւերը: Անաստղարթ այդ թերթերը ազգեցին վրաս պատանեկութեան օրերու սիրահարական նամակի մը պէս, որ զրքի մը մէջ մոռցուած է ու յանկարծ աչքերուդ կը զարնէ երբ ձնշուած ես տարիքի ու հոգերու ներքև: Հո՛ն քովէ քով ենք Մելքոն Կիրճեան, Զօհրայ, Բաշալեան ու ես: Այդ զեղնած տերևներուն մէջէն բուսակ մը վերակենդանացաւ յիշատակն այն սարսուտին որով բնազդը կը յուզէր մեզի, փոթորկին մօտալուտ պայթման ազգարարութեամբ:

Ու առանց արտօմութեան չէր որ յիշեցի այդ անցեալը, ուր թիւրքիոյ եւ Ռուսիոյ Հայերը մէկ գաղափարով մը, մէկ սրտով իրարու փարած էին մէկ Հայաստանի սիրով: Հայրիկ ամենուս համար Հայոց Աստուծոյ իբր հոգին թևատարած կը սաւառնէր Պոլսէն Վարագ, Վարագէն Արարատ: Եւ այս առղերը զրոզը ամէն օր Պոլսոյ մամուլին մէջ թիւրքիոյ Հայոց մտքերն ու սրտերը կովկաս կ'ուղղէր, ուրկէ Հայաստանի արեւուն ծագման նախարձակ նշոյնները կ'ընդնշմարէին. ու ամէն օր ալ կովկասի մտքերն ու սրտերը կը վարէր դէպի թիւրքիոյ տառապեալ Հայերը:

Ու երբեմն «ժամանց»ը կուգար սրտերը զովացնել օրուան տաղնապալից կեանքին հրայրքէն: Մերթ կովկասցիներուն հետ կը ժպտէինք պոլսական բարքերու ցուցադրութեամբ, եւ մերթ պոլսեցիներուն հետ ի տես կովկասեան զիմազծերու: Այդ ժպտանքերն մէկն է որ հին Մասիսէն այս նոր երեսներուն կուգեմ թոշտեցնել: Տեսնուի թէ սերտ բարեկամութիւնը եւ ծիծաղը կրնան եղեր իրարու հետ հաշտ ապրել:

ՍԿԵՊՏԻԿ

* * *

Պոլսէն անցնելով Բարիզի Արուեստահանդէսին գացող կովկասցիին իր ծառայութիւնները մատուցանելու համար Պ. Գր. Գալֆայեան ամէն առտու արևը ծագելէն առաջ մակոյկով կը սպասէ Սեւ ծովէն դալիք շոգեաններուն: Հայ չիւրտները շատ անգամ յուսախաբ ետ կը դառնայ. բայց երբ Բաքէի շոգեանը կ'երևի, վստահ է թէ նոյն օրը կովկասցիներու պատկանելի բանակի մը պիտի առաջնորդէ: Այո՛, ամէնքն ալ Բաքէի շոգեանով կուգան—կամ ինչպէս իրենք կ'ըսեն «Պակէա»ով: Ազ-

գասիրական պարտականութիւն է:

—Մենք էլ, եղբայր, մի պան անենք նրանց համար. նրանք այնքան պաներ են անում մեզ համար, կ'ըսեն:

Եւ արդարեւ Բաքէի ընկերութիւնը կը կոչուի «Հայկ մարտեան ընկերութիւն», իր շոգեաններուն մէկուն առնունը Արմէնի է. Լորիս-Մելիքօֆի մարմինը այդ ընկերութեան շոգեանով փոխադրուած է Պաթում, ու երթեւեկութեանց ծանուցումները Մշակի մէջ կ'երևին: «Էլ ի՞նչ պէտք է» որ Բաքէի ընկերութիւնը կովկասցի հայուն աչքին ազգային հիմնարկութեանց մաս եւ բաժին չհամարուի:

—Մեր ազգութիւնը երեք պանով է պահպանվում, կ'ըսեն կովկասի հայերը. Եկեղեցիով, Ուսումնարանով, Պակէտով:

Լոյսը ճեղքուելուն պէս շոգեանէն կ'իջնի, եւ կուզեն երթալ Արևելքի խմբագրատունը, ուր կ'առաջնորդէ իրենց Պ. Գալֆայեան: Ո՛չ ոք եկած է դեռ. կը զարմանան: «Իրենք Պաթումից գալիս են, և Պոլսեցիք դեռ անկողնումն են»: Քանի մը ժամ վերջ կուգան խմբագիրները: Ուղեւորները կը փնտռեն անունով իրենց ծանօթ անձեր:

Քիչ մը հարցուփորձէ եւ սուրճ խմելէ յետոյ կը պատրաստեն պրօգրաման, որ է՝ ծրագիր: Նախ՝ Հայրիկը պիտի տեսնեն: Կովկասցիին սը Պոլիս կուգայ և կը մեկնի Հայրիկին աջը չհամարուած, կը նմանի ուխտաւորին որ Երուսաղէմ կ'երթայ ու առանց Քրիստոսի գերեզմանը համբուրելու կը դառնայ: Յետոյ պիտի այցելեն Ներսէս Պատրիարքի շիրմին, ու անկէ ետքն ալ Այա-Սոֆիան պիտի տեսնեն, Վոսփօրը, կղզիները, Պոլսոյ «նշանաւոր գործիչներին»: Իրենց կ'առակուի թէ առ այժմ այդքանը կը բաւէ մէկ շաբթուան համար: Ի՞նչ մէկ շաբթուա: Նոյն իսկ իրիկուան շոգեկողքով պիտի մեկնին: Չեն կրնար համոզուիլ թէ Հայրիկը տեսնելու համար միայն երկու երեք օր պէտք է: Ինչպէս. «միթէ Հայրիկ Պոլսում չէ՞»:

—Այո՛, Պոլիս է, կը պատասխանուի. բայց ո՞վ դիտէ ո՞ր է. Իսկիւտա՛ր, Մաքրգե՛ղ, Կղզի՛ն, Պէօլիքատէրէ՛:

Բայց միթէ այդ ամէն տեղերն ալ Պոլսոյ մէջ չեն. «մի կտոր վեր առնենք եւ գնանք գտնել Հայրիկին» կը խնդրեն: Չեն կրնար ըմբռնել թէ մէկ երկու ժամուան մէջ Պէօլիքատէրէն Իսկիւտար, հոնկէ Մաքրգեղ անցնել հնարաւոր չէ: Չիրենք համոզելու համար կ'առարկուի թէ Հայրիկ գուցէ Կղզիները ըլլայ:

—Դե՛հ, պարախօտով գնանք, կ'ըսեն, եւ կը պատրաստուին:

—Բայց միշտ շոգեանաւ չի կայ:

—Ի՞նչ էք ասում. դէհ, գնանք այն պատիկ պանով որը մեզ առաւօտուն պարախօտից դուրս բերաւ:—Սաւտալ ըսել կուգեն:

Ի՞նչպէս հասկցնել իրենց թէ սանտալով կղզի չեր-

Թըցուիր. Թէ նոյն իսկ մէկ օր պէտք է շոգենաւոյ երթալ գայու համար: Կը յշտանան կարծելով թէ Պոլսեցիները զիրենք կը ծաղրեն:

—Ախր մի օրից մենք վիեննա ենք գնում:

Ժամանակը յառաջացած է. խմբագրատունէն դուրս կ'ելլեն ծրագրին միւս մասերուն գործադրութեանը համար: Բայց սոված են՝ այսինքն անօթի են: Ղալաթիա Պղարկի—Արթինին կ'առաջնորդուին: Կը փափաքին տեղադական ուտելիքի:

- Բիլաւ կուզէ՞ք:
- Բըլաւ մեր երկրումն էլ կայ:
- Տոլմա՞:
- Մեր երկրումն էլ կայ:
- Միտեա՞:
- Դա ի՞նչ պան է որ:
- Տեսակ մը սեւ ոստրէ:
- Չենք ուզում. մեր երկրում չենք տեսել:

Դուռարին ըլլալով գտնել ուտելիք մը որ «իրանց երկրումը» թէ՛ ըլլայ և թէ՛ չըլլայ, այսպէս թէ այնպէս պատահ մը բան կուտեն: Միայն թէ զինին շատ կը հաւնին. իրենց երկիրն ալ այդպէս զինի չեն խմած. վրան «պատիկ պատիկ աստղներ են պլպլում»: Իրենց ընկերացող Պոլսեցիները իրենք ալ կուզեն համը նայիլ. տարօրինակ համ, ձեթի համ: Կը նային դաւաթին մէջ—այո՛ «պատիկ պատիկ աստղներ պլպլում են» զինին երեսը: Տարակոյս չի կայ, գերիւն ետղի է: Պոլսեցի խըմբագիր մը կամայ մը սպասաւորին կը հարցնէ թէ «ի՞նչ է աս»: Մարդը ներողութիւն կը խնդրէ, ականջէն փրփուփուսով թէ զինին անպարանքով գերիւն ետղի շիշերուն մէջ լեցուցեր է: Ու անոնք կը շարունակեն սքանչանալ:

—Ինչ եւ է, ձեր երկրումը գտնէ մի լաւ պան կայ:

Ճաշէն վերջ կ'անցնին Սթանպուլ. քանի մը կառք լեցուելով կը հասնին Այա—Սոփիա: Պ. Գալֆայեան ներս կը մանէ և կը վերադառնայ լուր բերելով թէ իւրաքանչիւր այցելուի համար պէտք է մէծիտիէ մը վճարել: Կ'ապշին. իրարու երես կը նային: Կուզեն զիտնալ թէ իրենց փողով ինչ կարծէ մէծիտը: Երկու բուպլի է զրեթէ: Քարացած կը մնան. գլուխին կ'երեբցնեն: Անկարելի է որ ստակ վճարեն մուտքի համար

—Մեր երկրումը մուզէնքի մուտքը ձրի է կը գոչեն:

Իրենց կ'առարկուի թէ քանի որ կովկասէն Բարիզ երթալու համար այդքան ծախսեր կ'ընեն, երկու բուպլի աւելի, երկու բուպլի պակաս, նշանակութիւն չունի. կ'արժէ տեսնել Այա—Սոփիան:

Այս գիտողութեան կը նեղանան: Սկզբունքի և ոչ թէ ինսյողութեան համար չեն ուզեր վճարել: Հանրային շէնքի մը մուտքը ձրի պէտք է ըլլայ, այս է իրենց երկրին սկզբունքը: Ու իբր ասպոցոյց իրենց համոզումին իրենցմէ մին թղթապանակէն երկու բուպլի կը հանէ, կը պատուէ, հովին կուտայ:

—Արի՛, Գրիգոր ջա՛ն դու էլ, Ստեփան ջա՛ն դու էլ. Կարապետ ջա՛ն դու էլ. դու էլ, դու էլ, դու էլ:

Ու ամենքն ալ հանդիսաւորապէս երկուքական բուպլի կը հանեն, կը պատուեն, կը նետեն:

—Տեսնո՞ւմ էք: Խօ՛, մենք Պոլսեցի հոսհոս չենք որ սկզբունքից, ուղղութենից զուրկ լինենք: Մենք Մշակ ենք կարդում. դուք Մշակ չունէք, ուղղութիւն չունէք: Դեհ, գնանք:

Ա՛լ ուղղակի Պատրիարքարան կ'իջնեն: Խօր լուծութեամբ կը յառաջանան, մտածկոտ, ինքնամփոփ, Ներսէսի գերեզմանին մօտենալու վրայ են: Մայր Եկեղեցին ի տես հանգուցեալ պատրիարքին շիրմին կը բանան գլուխին երկիւղածութեամբ, զգածեալ կ'աղօթեն: Կը խոն արհին, կը համբուրեն տապանաքարը, և միտքարուած դորս կ'ելլեն արցունքոտ աչքերով:

Հայրիկի եւ Ներսէսի շիրմին հանգէպ է միայն որ կովկասեցիները քննադատութիւն ընելու սկզբունքը կը գոհեն:

Կարգը չարչռն տեսնելու եկած է: Ոտքով ամէնը մէկտեղ վեր կ'ելլեն Կէտիկ—Փաշայի դարիվերէն: Երբ կը մտնեն նեղ փողոցը ուրկէ մեծ շուկան կ'երթցուի, յանկարծ բանջարեղէնի խանութի մը առջեւ կանգ կ'առնեն հիացած:

—Ա՛խ, ի՞նչ մեծ խոյնար կը գոչեն. տես էտ էլ մեր երկրումը չկայ:

- Ի՞նչ խըլար, ո՞ր է. կը հարցուի պոլսեցիներէն:
- Դե՛հ, այդ կախը:
- Եղբա՛յր, այդ զղում է. ասու գապագ կ'ըսենք:
- Էտպէս զգում կը լինի՞:
- Էյ այդպէս ալ խոյնար կ'ըլլայ:

Ասոր ալ չեն համոզուիր: Կը սնդեն հատ մը առնել, այնտեղ ուտել, համը տեսնելու համար. «ախր փողը մենք ենք տալիս» կ'ըսեն:

Ի՛նչ փորձանք: Բոնի պոլսեցիները զանոնք կը հեռացնեն. վշտացած կը հեռանան:

—Ախր ինչո՞ւ մեզ էտպէս ծաղրում էք: Ուզում էք որ խոյնարը մեզ զղում հաւատացնել տաք: Դուք մեր երկիրը որ գալու լինեք մենք ձեզ էտպէս պան չենք անում:

Շուկան վէճը իրենց միջև կը սկսի: Մէկը կ'ըսէ՝

—Է՛հ, մեր քաղաքումն էլ էտպէս չարչու կայ. չարժէ տեսնել:

—Տ՛օ, իրիտ, կը պատասխանէ ուրիշ մը խնդալով, քո ամբողջ քաղաքը այս չարչուի կէտը չէ. ո՞ր տեղաց էտպէս չարչու պէտք է ունենաք:

Այդ միջոցին լրագիր ծախողները կ'անցնին: Պոլսեցիները Արևելք մը կ'առնեն. եւ երկուրդ երեսը, ազգային լուրերու շարքը կը տեսնեն այցելուներուն անունները, մականունները, քաղաքալարական յիշատակութեամբ մը: Յոյց կուտան անոնց: Չեն հաւտար. իրենք ալ կը կարդան, սւ ձեռքէ ձեռք կ'անցնեն:

—Տօ՛, մենք սվքեր ենք որ գրել են. ո՞ր տեղաց էլ

իմացել են: Իսկ Մշակ էտպէս պան չի' անի: Ուղիղ ասած որ հոսհոս էք:—Ու կը խնդան, կը խնդան.

Իւրաքանչիւրը իրենցմէ բանի մէջ Արևելքը կ'առնէ: Ամէն մէկը կը բանան կը նային թէ ստուգիւ անուննին ամէնուն ալ մէջը կ'ա՛յ:

Ա՛լ ուրիշ բանի վրայ չեն նայիր. աչքերնին Արևելքին է:

Յոգնած դադրած կը հասնին Սիրեցէի: Արևելքի ձրուիչը որ առտուրնէ ի վեր Հայրիկը կը փնտռէր, հոն կուգայ լուր բերելով թէ Հայրիկը այն օրը Պոլիս չէ իջած: Ուղևորները անմխիթար են. մինչև իսկ Արևելքն ալ կը գոցեն: Արուեստահանդէսը հառամ պիտի ըլլայ: Ի՞նչ երեսով երկիրնին պիտի վերադառնան.

—Դուք մարդ չէք, պիտի ասեն մեզ, մեր երեսին պիտի թքեն.

* * *

Ամսէ մը ետքը իրենց երկիրն են: Առաջին գործերնին է իրենց ազգականներուն, բարեկամներուն, ծանօթներուն Արևելքը ցայց տալ:

—Տեսէք, ինչ հոսհոսներ են. մեր անունը, ազգանունը Պոլիս գնալը պրել են. Մշակ էտպէս պան կ'անի՞, ի՞նչ ասես. հոսհոս են. մեզ պատիւ են արել. չէ՞:

Ու յետոյ հպարտօրէն կ'աւելցնեն.

—Ի՞նչ մեծ թերթ. չէ՞. իսկի մենք էլ էտպէս մեծ թերթ չունենք: Պատիւ է բերում հայերին. ուղիղ ասած Եւրոպացու թերթ:

—Ե՛յ, եղբայր, ուրիշ ի՞նչ պատիւ արեցին ձեզ պոլսեցիները.

—Ոչինչ. միմի փնջան զայֆով հիւրասիրեցին մեզ. ի՞նչ մեծ թերթ:

ԼՈՒՐԵՐ

ԻՏԿԱՐ ՇԱՀԻՆ կը շարունակի իր յաջողորոշիւններուն զեղեցիկ շարքը: Բարիզի ցոռցանաւորիսին մէջ ուր իր նկարներէն երկուքը եւ տասնի չափ փորագրութիւն ի տես դրոշմ էին, ոսկի շքադրամ տրուեցաւ հայ արուեստագետին: Ետտ հազո՞ւադէպ է որ այսքան երկտասարդ արուեստագետ մը այսպիսի բարձր գնա հատուծի արժանանայ: Խօնակցո՞ւրիւն եւ շնորհաւորութիւն:

ՀԱՅՈՑ ԹԻԻԸ. Գերմաներէն նոր հրատարակութիւն մը որ Հայոց և Քիւրտերու վրայ կը խօսի, կ'ըստի թէ ձգրիտ բուսահամար մը ընել շատ դժուար է, բայց մտաւարապէս մեկուկէս միլիոն գեղացի եւ երկու հարիւր յիսուն հազար ալ քաղաքացի հայ կը գտնուին թիւրքիս, ուրեմն ընդ ամենը թիւրքիոյ Հայոց թիւը թիւրքիոյ մէջ 1,750,000 հոգի կը հանէ:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՏՈՒՐԲԸ. Կ. Պոլսոյ քերթերը կը ծանուցանեն թէ վերջին երեք տարիներու Հայոց զինւորական տոչքիւն պիտի զեղչուի մեծաւորներու, բացակայներու եւ գաղթածներու բաժինը: Մեկ տարուան տոչքը ամբողջովի պիտի չ'աւանդի, իսկ մնացեալ երկու տարուան ալ չորս տարուան մէջ պիտի գանձուի: Ա՛յս է եղեր: Բայց կը մոռցուի թէ կոտորածները 95-96 ին տեղի ունեցան, այսինքն՝ չորս հիւղ տարի ասաւ, որով այդ տարիները կոտորուող, փախչող Հայոց տոչքերը պիտի պահանջուին ողջ մնացողներէն: Երկու տարուան տոչքը բարդուելով յառաջիկայ շրջաններուն վրայ, աւելի պիտի ծանրացնեն ժողովրդին վիճակը: Իսկ այդ տոչքերուն պատճառաւ խաւանացողները,

ՄԻՈՒԹԵԱՆ կեդրոն մըն ալ հաստատուած է Բարիզ, 9 Ռիւ Բարայն Բամիս, Հայոց գրադարանը ուր արդէն 35 հատ հայ և օտար լեզուով քերթեր կը ստացուին, և որ ամէն օր ամենուն համար բաց է:

ՔՐԻՍՏՈՍ ԱՐՇԱԻԱՆԻ ՄԸ. Մայիս 1ի գիշերը Քիւրտերը յարձակել են Ուրմիոյ Գերման որբանոցին վրայ. հրացաններ են, ասանց կարեւար վիրաստերու, վարժուածի մը եւ սպասաւոր մը. հայ կիւն մը չարչարել են, եւ գորգեր ու զգեստներ յափշտակել են: Բայց կարող չեն եղած ելլել վերնայարկը ուր կը կենային գերմանուհի ուսուցիչները եւ որբերը: Երջակաւները այս արշաւանքին յոչրը լսուելուն, անմիջապէս զինեալ քրիստոնէական եւ խալաներ կը հասնին ոճրագործութեան վայրը, և առաջակներուն տեսէն իյնալով 16ը կը բռնեն ու կը բերեն բանտարկել կոչուան: Թե՛ն լանի գերմանական դեսպանը բողոքած է Պարսիկ կառավարութեան, ոճրագործներուն պատժուիլը պահանջելով: Պարսիկան իշխանութիւնը խիստ հրամաններ դրկել է Ուրմիոյ իշխանութեանց, զիրենք պատասխանատու ձանչ'ալով ո՛ր և է նոր դէպքի համար: Զինեալ 40 հոգի որբանոցին պարտեզը կը հսկեն զիշեր ցորեկ:

ՀԱՍՑԷ ԵՒ ԲԱԺՆԵՂԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել ա՛մ՝

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.